

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԳԱՐԵԳՐՆ ԲԵՍ

# ՎԻՇԿԱՆԵՐԸ



891.99  
P-52

ԲԱՐՁՐԱՆՈՒՄ

01 JAN 2009  
19 NOV 2011

891.99 *uy*  
F-52  
F-57


ՀԱՐԵԳՐՆ-ԲԵՍ

ՎԻՇԿԱՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ԵՆ



1008  
12962  
34621

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1932





4 MAR 2013

29137

## ՎԻՇԿԱՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ԵՆ

1

Ծովափին, 600 մետր խորութեան տակ գտնվող հողաչերտերում նավթ կար, վորն այդտեղ չէր վերջանում, այլ ձգվում, յերկարում եր դեպի առաջ, անցնում եր ջրի տակ և բռնում ահագին մի տարածութուն:

Յեվ այն հարկավոր եր հանել այնտեղից, չթողնել այդ հսկայական հարստութունը ջրի, հողի տակ. սակայն փովող տարածութունը բռնող ծովը չորացնելու համար յերկար ժամանակ ու մեծ աշխատանք եր հարկավոր:

Ուրեմն հարկավոր եր մտածել, շատ մտածել էլ ավելի լավ և հեշտ միջոցների մասին:

Այդ առթիվ խորհրդակցութիւններ հրավիրեցին, յերկար ժամանակ ինժեներները կանգնեցին ծովափին ու նայեցին դեպի առաջ, դեպի հեղուկ կապույտը:

— Ծով, ի՞նչպե՞ս հաղթահարենք քեզ:

Յեվ միշտ էլ հեռանում էին այդտեղից, ուղեղներում տանելով այրվող հարցը:

Ծովի տակ հարստութուն կա. ի՞նչպե՞ս ողտազործել այն:

Ինժեներ Լիֆչիցը, ինչպե՞ս և շատերը, անգամ ճաշի ժամանակ, անգամ անկողնում պառկած ժամանակ, դիչերվա կիսին, միշտ մտածել է այդ հին, այդ նոր



հարցի մասին ինժեներ Լիֆշիցն առաջիններից մեկն  
էր, վոր յեկավ այդ յեզրակացութեան, այն է, վոր  
հարկավոր է...

Բայց մի՞թէ այդ հնարավոր բան է, մի՞թէ այդ  
յերազ, Փանտաղիա չէ...

Հեշտ է, ասենք, ցամաքի վրա կանգնեցնել վիշկա,  
հետո սկսել հորափորման աշխատանքը:

Փորիչ կացինը կամրացնեն խողովակներին ու ելեկ-  
տրական մաստորը կաշխատեն:

Յերկաթը կմաշկե հողը և հորը կխորանա:

Հողի խոր շերտերին յերկաթն իր վսզղույնը կտանէ:

Փորված հորից խողովակները կհանվեն դուրս:

Հետո կերկարվեն նավթահան խողովակները:

Նավթը, թանդաղին նավթը, յերկրի խոր խորքե-  
րից կբարձրանա վեր:

Կարող է և շատրվանել:

Հետո այդ նավթը խողովակների միջով կտանեն  
Սեվ-քաղաք, վորտեղ նրանից սպիտակ կերոսին, մա-  
ղութ, դեղուին, բենզին ու մի շարք այլ նյութեր կատա-  
նան:

Այո, շատ հեշտ է այն դժվարութիւնը, վորը լի-  
նում է ցամաքի վրա վիշկա կանգնեցնելիս ու հոր փո-  
րելիս:

Հեշտ է և այն, յերբ ափից հեռացնում են ծովն ու  
տեղը նոր ցամաք ստաջացնում, վորտեղ դարձյալ նոր  
վիշկաներ են բարձրացնում:

Հսկայական Շալանդանավը կանգնում է ծովի  
մեջ, հատակից ծծում է հող, կեղտ, քարեր, ծովային  
կենդանիներ ու բույսեր:

Յերբ լցվում է նրա հսկայական «փորը», յերբ

«կշտանում» է նա, բարձր սուլում է սուլիչը և ջուրը  
շարժվում է:

Ներքեւում խորանում է հատակը և ջուրը քաշա-  
նում է:

Շալանդայի ծխնելույղից բարձրանում է խիտ  
ծուխը և փռվում է ծովի վրա ու գեղեցիկ կանաչում են  
ալիքները:

Կամաց-կամաց Շալանդան մոտենում է ափին:

Ճանապարհին նա ամուր ճեղքում է ալիքների  
կուրծքը:

Կանգ է առնում:

Կրկին բարձր սուլոց է տարածվում ջրերի վրա:

Փոքրիկ ալիքները դարնվում են հսկա նավի պա-  
տերին:

Ափին հորիզոնական ձգվող խողովակից դուրս է  
ժայթքում խայտարղետ, խիտ ու անթափանց գուրըչի:

Հետո սկսվում է հրդեհը:

Դուրս է հոսում կեղտը:

Պղպղում են ջրերը և ձկներն ու ծովային այլ կեն-  
դանիները պարում են ցամաքի վրա, բայց շուտով թաղ  
վում են կեղտի նոր շերտի տակ և վերջին շարժումը  
գործելուց հետո, անշարժանում են:

Ու կամաց-կամաց ցամաքը բարձրանում է, լայնա-  
նում է, ձգվում է դեպի ծովը և ջուրը հեռանում նախ-  
կին ափից:

Ծովի տակից բարձրանում է նոր ափը:

Չորանալուց հետո այդտեղ վիշկաներ են կառուց-  
վում ու հորափորում և նավթահանում է լինում:

Այո, հեշտ է անգամ այդ:

Իսկ ինչ վոր մտածեցին ինժեներ Լիֆշիցն ու իր  
ընկերներն, այդ արդեն հեշտ չէր...



Ինժեներ Լիֆշիցն այդ նոր յեղբակացության մասին  
ել է շատ մտածել, խորհրդակցել է շատ մասնագետների  
հետ, գնացել է Ադնեթ ու համոզվել է, վոր իր նոր  
յեղբակացությունը յերազ, Փանտաղիա չէ: Հարկավոր  
է ուժ, կամք: Նվիրվածությունը, հավատն ու յերազը,  
Փանտաղիան ճշմարիտ իրականություն կդառնան...

Վորոչվեց նախ կանգնեցնել մի վիշկա, փորել մի  
հոր, և, յեթե ամեն ինչ հաջողությամբ կպսակվե, այն  
ժամանակ կրարձրացնեն շատ նոր վիշկաներ...

Սկսեցին նախապատրաստական աշխատանքները:

Հայտնեցին մի բրիգադի, վոր իրենք սկսեն առաջին  
վիշկայի կառուցումը:

Բրիգադիբը վոլորեց բեխերը, յերկար ժամանակ  
նայեց դեպի հեռու տարածվող ծովը, հետո, դարձավ  
դեպի ինժեներն ու

— Ձենք կարող:

— Ինչո՞ւ:

— Շատ հասարակ և շատ պարզ խոսեց բրիգադիբը,  
մենք չենք կարող դուրս դալ բաց ծով ու շարժվող, ա-  
վելող ջրի վրա վիշկա կառուցել:

— Նավթ եք ուզում, կարող ենք ծովը չորացնել,  
ասաց մեկը:

— Հենց այտորվանից սկսենք այդ աշխատանքը—  
ավելացրեց մի յերկրորդը:

— Վոչ, այդ չենք ուզում, այդ մեզնից յերկար  
ժամանակ կխլե, այդ մեծ ծախսերի հետ է կապված—  
խոսեց ինժեներ Լիֆշիցը—մենք կամենում ենք ծովի  
վրա վիշկաներ բարձրացնել ու...

— Իսկ մենք դրան համաձայն չենք, վորովհետև

ասորել ենք ուզում, վորովհետև մենք յայնպե՛ս չենք  
չուսնենք:

Մի քանի որ անց, յերբ այդ մասին հին վարպետ  
Քյարիմ ողլին լսեց, գնաց դրասենյակ և հայտնեց.

— Իմ բրիգադան պատրաստ է ծովում աշխատելու:

Ու մի առավոտ, հսկայական նավը լցրին սյունե-  
րով, տախտակներով և հեռացան ափից:

Ընկերներ, յես հերոսությունների մասին եմ պատ-  
մում, հսկայական աշխատանքների մասին եմ պատ-  
մում ու ենտուղիաստ մարդկանց մասին եմ պատմում:

Այդ ժամանակ բացվել էր 1931 թ. դարունը:

Վերևից արեգակը թափում էր իր վսակեզույն ճա-  
տղայթիները, վորոնք ներքևում, ծովի մակերևույթի  
վրա, խաղում էին մեծ ու փոքր ալիքների հետ, պա-  
րում, ձուլվում նրանց և անհետանում ծովի խորքե-  
րում:

Նավից յերկարեց առաջին սյունը:

Նա ճեղքեց ջուրը և դեպի ներքև գնաց:

Յերբ նա խրվեց հողի կուրծքը, վերևի ծայրն ամ-  
բողջովին թաղվեց ջրի տակ:

Վոչ. դրա վրա վիշկայի պատվանդան դնել չի կա-  
րելի:

Յերկարվեց յերկրորդ, բայց ավելի յերկար սյունը  
և նրա մի ծայրը մնաց ողում, ջրի մակերեսից բարձր:

Նավակը մերթ ափին իր մոտենում, մեկն ու մեկը  
դուրս եր գալիս նրա միջից, ուրիշները նստում էին  
և դեպի յետ, դեպի ջրի մեջ խրվող սյուններն եր շարժ-  
վում:

Ափից տասնյակ աչքեր նայում էին ծովում, ալիք-  
ների վրա աշխատող, բախորներին:



Իրանց մեջ երևալն և այն բրիգադիրը, վորը հրատարակեալ էր ծովում աշխատելուց:

Քիչ հետո նա ամաչեց իր արածից և հեռացավ ծովափից:

Յերկարովեց յերրորդ սյունն ել:

Մի քանի որ անց, տասից ավելի հաստ սյուններ ծայրեր յերևացին բաց ծովում:

Այդ սյունի վրա պիտի ամուր կառուցվի վիշկայի պատվանդանն, իսկ վիշկան ահռելի, շատ ահռելի ծանրություն ունի:

Յերկար ու հաստ տախտակներ դրվեցին սյունապագաթների վրա:

Հաստ դամեր խրվեցին նրանց կուրծքը:

Այդպիսի բուպեններն, սյուններն զարնվող ալիքներէց, ջրի մեծ կաթիլներ ելին բարձրանում վեր ու ընկնում աշխատող բանվորների բաց դիմներին:

Քիչ հետո նրանք միանում ելին ճակատներից հոսող քրտինքի կաթիլներին ու ընկնում կառուցվող հասակի վրա:

Ծովի վրա փովեց տախտակների փոքրիկ հարթությունը և վերև բարձրացող շատ ալիքներ ընկան նրա վրա ու թացացան տախտակները:

Ձրի փոքրիկ կաթիլներ կաթեցին նրանցից:

Ալիքների վրա կանգնեց վիշկայի պատվանդանը:

— Դեռ աշխատանքի խոշոր ու կարևոր մասը մնում է—սասց բրիգադիր Հին վարպետ Քյարիմ ողլին:

Բարձրահասակ, թավ ունքերով մի մարդ է Քյարիմ ողլին, այդ Հին վարպետը:

Նավթի պես սև ու մուգ է նրա մեծ աչքերի գույնը:

Հաստ բազուկների մեջ աշխատանքի, յետանդի շատրվանող հանք կա:

Յերկար, շատ յերկար ժամանակ է, ինչ նա աշխատում է նավթահանքում:

Փոքր հասակում, յերբ մի որ վիշկայի դազութից ընկավ հայրը և մահացավ, նա մնաց վորբ, մեն-մենակ ու ընկավ փողոցները:

Քիչ մեծանալուց հետո գնաց նավթահանքերը և տկսեց աշխատել:

Հին վարպետ Քյարիմ ողլին Հիմա լավ հիշում է իր չքովորության մեջ անցած անցյալը, հիշում է նավթայինների 1905 թ. դործադուլները, վորին ինքն էլ եր ակտիվ մասնակցություն ցույց տվել:

Նա լավ հիշում էր Բայրի բանտը, նրա չորս պատերը, վորտեղ անցկացրեց յերեք ամիս:

Համաշխարհային պատերազմից հետո նա հիշում է 1918 թ., յերբ հեռու անապատներում գնդակահարվեցին 26 կոմունարները, վորոնց նա շատ եր լսել և հարգել, սիրել, իրենն էր համարել նրանց գաղափարներն ու պայքարել եր նրանց համար:

Ձի մոտացել Մուսավաթյան Ադրբեջանը:

Իսկ 20 թվի ապրիլի 28-ը նրա ուղեղում գրավել է իր վալյուն տեղը:

Հին վարպետ Քյարիմ ողլին լավ գիտե, վոր նոր կարգերը ձեռք են բերել յերկարատե և ուժեղ պայքարից հետո. Հին վարպետ Քյարիմ ողլին գիտե և այն, վոր այսօր էլ է շարունակվում այդ պայքարը, պայքար պլանների կատարման համար, պայքար նավթի, բամբակի, պղնձի համար, պայքար սոցիալիզմի կառուցման, սոցիալիզմի հաղթանակի համար:

Իսկ այդ պայքարը պլանները կատարելով է լինում, ծովը չորացնելով ու տեղը վիշկաներ բարձրացնելով է լինում:



Այ, իրենք վերջացրին նավթի հնգամյակը և այդ շատ ուժեղ պայքար էր ու այդ շատ մեծ հաղթանակ էր:

Այդ բոլորը շատ լավ է ըմբռնում հին վարպետ Քյարրիմ ողլին:

Պայքարելով ալիքների վրա կառուցվեց վիչկայի հիմքը:

Հարկավոր է հիմա հենց վիչկան բարձրացնել:

Նա կանգնեց պատվանդանի վրա ու.

— Տղերք, սկսեք սյուների ամրացումը:

Յերկար ու հաստ գերաններ են, վորոնց հարկավոր է բուրդածև կանգնեցնել հիմքի վրա...

Այդ անելու համար հարկավոր է շատ ուժ ու շատ կամք:

Այդ ախջան էլ հեշտ գործ է:

Անցնում են որերը և ծովի վրա յերեվում է վիչկայի կմախքը:

Քամին պղտ անցնում էր նրա միջով:

Հիմա հարկավոր է տախտակել այն:

Մինչև գազաթը պիտի և զիզլազ առտիճաններ բարձրանան:

Շարժվում են մի քանի մուրճեր ու դամերն են թրվում տախտակների կուրծքը:

Աստիճանը կամաց-կամաց բարձրանում է:

Աշխատանքը կարծես վախճանին է հասնում:

3

Վերջին որվա մասին, բրիզադեր հին վարպետ Քյարրիմ ողլին պատմում է հետևյալը.

— Յերեկը թուխպը ծածկել էր ամեն ինչ, և չէր յերևում անդամ ծովափը: Մեզ թվում էր, թե դանդում

ենք ջրային մի կղզում, աշխարհից կտրված, մարդկանց ժիջ հեռու, իսկ շատ անգամ էլ թվում էր, թե հենց յերկրագնդի վրա մենակ մենք ենք ապրում: Թիպի մեջ թաղված էյին մենք: Յերեկոյան կարծես յեղանակը քիչ պարզվեց և հեռվում յերևացին վիչկաների կատարները: Գիչերը քամին սուլելով էր անցնում մեր գլխի վրայով, իսկ անձրևի կաթիլները թափվում, հա թափվում էյին: Սավար, մութ գիչեր էր, իսկ մեզ մոտ վառվում էր էլեկտրական լույսը, լարն ափից էյինք բերել, ջրի վրայով: Յես կանգնած էյի վիչկայի վերեվում ու տանիքն էյին դնում: Յես այնտեղից տեսնում էյի քաղաքում թարթող լույսերը: Ներքևում խելագար գաղանի պես մոնչում էր ծովը և թվում էր, թե քարեր են կալում վիչկայի պատերին: Այ, յեթե այդ բարձրությունից, ճեղքելով խիտ խավարը, գլորվեյի ներքև, ընկնեյի գաղանացած ծովի գիրկը, հորս պես կմահանայի, կխեղդվեյի յես, բայց յերևաներս վորք չեյին մնալու փողոցները չեյին ընկնի... Բանվորներից վրձանք համարյա հուսահատվեցին:

«Այ, վիչկան կծովի, կընկնի ծովը և...» ուղում են նստել նավակ ու դուրս գալ ափ... Աչքերս հառում եմ նրանց վրա, իսկ դեմքերին խաղում են լույսի ալիքները: Անձրևի կաթիլները թափվում են, հա թափվում: «Տղերք—խոսում եմ յես—Բուխտան ճեղքվածք ունի, միթե՞ չե՞ք կամենում պայքարել այն ծածկելու համար: Իլլիչի Բուխտայում աշխատող բանվորն այդպես չպիտի լինի: Բոլորս էլ կմնանք այստեղ, կաշխատենք, կհաղթենք, կամ կմեռնենք միասին»: Տառտեվում են: Սրբում են յերեսների ջուրը. լուռ վիչկայի հատակին են նայում: Ծովը խուլ մոնչում է: Նրանք



կանգնած են աստիճանների տարբեր վտարների վրա : «Հը՞, մնո՞ւմ եք» հարցնում եմ յես : «Այո» : Սկսում են աշխատել : Մեկը հակառակ է : «Տղերք, նստեցրեք դրան նավակ ու թող զնա կորչի, հեռանա, ղեզեբաիր շան տղա» : Նա շարժվում է դեպի ներքև : Գիշերվա խավարի մեջ լսվում է աստիճանների ձայնը : Ներքևում նա նավակ է նստում ու նավում է դեպի ափ : Այ, յեթե աշղպիսի մարդիկ մենք չունենանք, իհարկե պլանների թերակատարում չի լինի : Աշխատող ուժ է հարկավոր, նախկինում թյուն է հարկավոր՝ բուխտայի ճեղքվածքները ծածկելու, պլանները կատարելու ու գերակատարելու համար : Աշխատում ենք : Գիշերվա բուխտայի մեջ միայն մեր մուրճերի ձայնն ու ալիքների մոնչյունն է լսվում : Ինձ թվում է, թե անդունդի ծայրին եմ կանգնած : Ներքևում խավարի, սև ու մուգ խավարի ծով է : Վերևից մեզ վրա յեն թափվում անձրևի կաթիլները : Քամին ուժեղ վստնում է : Այ, նա կարող է, ինձ պոկել վիշկայից, պարեցնել ոգում, հետո դցել ջրի մեջ ու... : «Տղերք» — ներքևից մեր ալանջին է հասնում մի ձայն : «Հեյ, ո՞վ եք» : Մի նավակ մոտենում է վիշկային ու մեկն աստիճաններով բարձրանում է վեր : «Տղերք, մոտեցա ափին, չկարողացա ձեզ թողնել ու հեռանալ : Ախր յես ինչպես կարող եմ Հնդամյակի դեզերտի դառնալ : Յես կաշխատեմ ձեզ հետ» : Յես, հին վարպետ Քյարիմոզլիս, ուրախ ծիծաղում եմ : Ախր դա հաղթանակ է : Լույսը դեռ չէր բացվել, յերբ մենք վերջացրինք աշխատանքը և նավեցինք դեպի ծովափ :

4.

Առավոտյան, յերբ արևի ճառագայթներն ընկան խաղաղված ծովի վրա, յերբ փչում էր մեղմ, հով քամի, յերբ փոքրիկ ալիքները խաղում էին ափի քարերի

հետ, ծովի մեջ յերևաց ալիքների վրա բարձրացած վիշկան, վորի վրա ծածանվում էր փոքրիկ կարմիր դրոշակը :

Կատարին ամբացված էր հաղթանակի կարմիր աստղը :

—Մո՞վ,—խոսեց հին վարպետ Քյարիմ ողլին—Հըն՝ զամյակի համար մենք հաղթեցինք քեզ :

Մնում է մեքենաներ տեղափոխել ծով ու սկսել հորափորումը :

Յեվ ինժեներ Լիֆշիցը համոզված է, վոր շատ շուտով ել հորը կփորվի ու նավթը, կիդոտոտ, թանկագին սղոտոր հեղուկը կհատրվան վեր, կհարստանա յերկիրը :

Հետո ծովի լայն տարածության վրա շատ վիշկաներ կբարձրանան ու ենտուկաղմը, սոցմրցումը, հարվածաշուկները, կտարածվի ալիքների վրա :

Քաղա. 1931 թ.



Յերբ Պուտա կայարանից յերկու մետր հեռանում ես դեպի աջ, առջևդ բացվում է մի անապատանման տարածութուն:

Ավաղը ծածկել է լայն տարածութունը և թվում է թե հենց ավաղի ծով է:

Այդտեղ չկա ջրային մի տեղ, կանաչ ու մարդկային մի շունչ:

Հեռվում, շատ հեռվում, անապատանման տարածութան սահմաններից հետո, յերևում են փոքրիկ թուրքահան դյուղեր:

Պատահում է դեպք, յերբ մարդիկ ստիպված են լինում քայլել, անցնել անապատանման տարածութունը, ապա նրանք իրենց հետ վերցնում են ջուր:

Հեռվից, յերբ նայում ես այդ հողամասին, իսկույն ծարավում ես:

Արևի կիզիչ ճառագայթները միշտ պառկած են լինում այնտեղ, դեանից միշտ բարձրանում է տաք, այրող գոլորշի:

Յերբ լինում է քամի, ավաղները շարժվում են տեղից, վաղում են դեպի առաջ, դեպի հետ, սպիտակ մի ոյուն են կազմում ու բարձրանում դեպի վեր, հետո թափոփ ներքև են թափվում, վոշին կլանում և շրջապատը և ամեն ինչ ավելի յե գորշանում, մռայլվում:

Ասում են իժերն ու մողեսները սողում են այնտեղ

և գիշերները խաղաղ քուն են մտնում այնտեղ թափված քարերի, կիրճերի մեջ:

Փոքրիկ, շատ փոքրիկ բարձրութուններ կան այդ տարածութան մեջ, վորոնք արևի տաքութունից ճաքոտվել են, հիմի ել փոքրիկ քարեր է պոկվում նրանցից ու վայր ընկնում, վորոնք հետագայում հալվում, ավաղանում են:

Ասում են, վոր այդտեղ ձորանման տեղեր ել են յեղել, բայց հետագայում քամու բերած ավաղը ծածկել է նրանց:

Լայն, անապատանման տարածութան մեջ ամեն ինչ դորշ է, մռայլ, ամեն ինչ խաղաղ է. միայն քամին, արևն են կարողանում նրանց վրդովել:

Արևը տիրում է ավաղին, քամին ել է ավաղին տիրում, բայց նրանք ուրիշ տեր ել ունեն, դա անապատի ծայրում հսարտ կանգնած բարձրութունն է, վորին անդամ վերև սլացած ավաղն ել չի կարող հավասարվել:

Բարձր, շատ բարձր ժայռ է նա, ավելի ճաքճաք ված քարերով, վորոնք նմանում են ծերացած մարդու դեմքին:

Ասում են, վոր նա վուրկանային է:

Պատմում են, վոր մի քանի տարի առաջ է հենց վուրկանել նա:

Ասում են, վոր առաջ լայն, անապատանման տարածութան մեջ տարածվել է սոսկալի աղմուկ և իժերն ու մողեսները զարմացած բարձրացրել են զլուխներն ու ունկնդրել այն:

Ասում են, վոր յերկինք բարձրացած ավաղի սյուժր յերկար ժամանակ մնացել է քարացած, հետո օթափվել է ու թափվել ներքև:

Աղմուկից հետո, պատմում են, վոր դեանի տակից



բարձրացել է ածխաջրային գազ և վերև ե չարտվել այր-  
վող կեղտը, վորի հոտից իժերն ու մողեսները զղվել են  
ու դեպի հեռուները փախել:

Հետո, ամեն ինչ լռել է, հանդարտվել, հետո իժերն  
ու մողեսները ընտելացել են նրան և նրանց ու ժայռի  
միջև ստեղծվել է մի անխախտելի բարեկամություն:

Ո՞վ, ո՞վ կարող է հիմա վրդովել անապատանման  
տարածության անդորությունը, ո՞վ կարող է ավելի  
բարձր լինել, քան վուլկանոզ ժայռն է, Լոկ Բոտանը,  
վորը հիմա տիրում է ամբողջ լայն, անապատանման  
տարածությանը, վորը իր բարձրությունից հսկում է  
նրանց, իժերին, մողեսներին, ավաղին և քամուն:

Լոկ Բոտանի թաղավորությունը հավերժական է,  
անմահ, անսահման:

Ո՞վ կարող է վրդովել նրա թագավորությունը. նա  
տիեզերական է:



Առաջին մարդը կանգնեց ավալոտ տարածություն  
ճայրին և նայեց դեպի դորչ հեռավորությունը:

Նա քիչ շարժվեց առաջ:

Իժերն ու մողեսները դարմացած նայեցին նրան ու  
վազեցին դեպի հեռուները:

Լոկ Բոտանը հպարտությամբ դիտեց մենավոր  
մարդուն:

— Հը, չլինի՞ թե կամենում ե վրդովել իր թագավո-  
րության անդորությունը:

Լոկ Բոտանն այդ թույլ չի տա, Լոկ Բոտանը դեռ  
ուժեղ է և ամենակարող:

Մենավոր անցորդը ձեռքը բարձրացրեց ու սրբեց  
ճակատից հոսող քրտինքը:

Լո կ Բոտանը կարծեց ժպտաց և դադարից յերկու  
փոքրիկ քարի կտորներ ներքև գլորվեցին:

Այ, այդպես կնեղե քեզ անապատը դու չես կա-  
րող...:

Մենավոր մարդը ուշադրութամբ դիտեց հեռուներ-  
րը, շրջակայքը, հետո կոացավ դեպի ներքև:

Ի՞նչ է անում նա:

Ավաղի տակից քիչ հող վերցրեց և սկսեց ուշադրու-  
թյամբ զննել այն:

Լոկ Բոտանը վոչինչ չհասկացավ, Լոկ Բոտանը  
չուռ նայում եր դրան:

Մենավոր մարդը թափ տվեց ձեռքի փոչին. նորից  
սրբեց ճակատի քրտինքը, նորից նայեց դեպի ավաղոտ  
հեռուները, հետո շրջեց հայացքն ու առաջ շարժվեց:

Փախավ նա. չկարողացավ զիմանալ կիրող տաքու-  
թյանը, մռայլ դորչությունը:

Լոկ Բոտանը բարձրացրեց գլուխը և թարթեց աչ-  
քերը. դետնի վրա մի փոքրիկ փոս փորեց մենավոր  
մարդը, դետնի վրա կնքեց իր վոտքերի հետքը:

Բարձրացավ մի թեթև քամի, ամեն ինչ ծածկեց ա-  
վաղով ու անհետացավ մենավոր ճամբորդի անախորժ  
հետքը:

Իժերն ու մողեսները դարձյալ վազեցին առաջ ու  
յետ և անհասկանալի բարձրությունից Լոկ Բոտանը  
հպարտությամբ դիտեց իր թագավորությունը:




Բայց, յերբ անցավ յերկրորդ օրը, անապատի  
ճայրին յերևացին մի խումբ մարդիկ:

Ի՞նչ, ինչո՞ւ, ո՞վքեր են նրանք:

Կարծես թե մեկին նա ճանաչում է... Ա, դա այն  
մենավոր անցորդն է:

1794C  
8001





Անկող հյուրերը շարժվեցին առաջ և կանգնեցին դորը տարածութեան մեջ:

Տու, գետնի վրա քանի վոտքերի հետք մնաց:

Տու:

Լոկ Բոտանը տեսավ, վոր իրեն խնծանոթ ինչ վոր դործիքներ հանեցին դուրս և սկսեցին գետինը փորել: Եյ, ի՞նչ եք անում:

Ի՞նչ անախորժ ձայներ:

Լոկ Բոտանը ջղայնացավ, Լոկ Բոտանը կամեցավ:

Չե, մարդիկ դադարեցին քանդելը:

Նրանք թիչ հող վերցրին ու մենավոր անցորդի պես հեռացան:

Ավագոտ տարածութեան մեջ ել անցորդ չերեաց:

Լոկ Բոտանը դարձյալ բարձրացրեց գլուխը և նորից փչեց ուժեղ քամի:

Ավազը շարժվեց տեղից, դալարվեց և մարդկային վոտքերի հետքը, մարդկային հետքը, մարդու ձեռքով փորված փոսն ամբողջովին ելի ծածկվեց Լոկ Բոտանին հաճելի, սիրելի գորշութեամբ:

Խավարը փովեց ավազի վրա, քնեցին իժերն ու մողեսները:

Միայն արթուն մնաց Լոկ Բոտանը, վոր հսկե իր ավազը, իր իժերին ու մողեսներին, վոր հսկե իր սեփականութունը:

Ո՞վ, ո՞վ համարձակվեց խանդարելու նրա հանգիստը, ո՞վ:

Մա՞րդը:

Հի, հի, հի:



Լարորատորիաներում յերկար ժամանակ զննեցին հողը. բաղմամբիւ հայացքներ յերկար ժամանակ հառած մնացին նրան, հետո բոլորն ել այն յեղրակացութեան յեկան, վոր Լոկ Բոտանի ըսյն տարածութեան մեջ գորշ ավազների տակ, գետնի խորքում, նավթային հարուստ շերտեր կան, վոր...



Լույսը դեռ չիր բացվել, յերբ ավազուտների մեջ տարածվեց ավտոների ձայնը և յերևացին մարդիկ:

Լոկ Բոտանը ապշած նայեց նրանց:

Մարդիկ իջան ավտոներից ու սկսեցին նորից անապատը դիտել:

Մի քանի հողի մի քանի կետեր նշանակեցին հողի վրա:

Ի՞նչ են անում այդ դիժ մարդիկ, ինչո՞ւ յեն այդքան ուշադրութեամբ դիտում, ուսումնասիրում ավագոտ հողը, քարերը:

Հը՞, ինչո՞ւ:

Քիչ հետո ինչ վոր ճոճուցներ լսվեցին և գորշութեան մեջ յերևացին մի քանի սայլեր:

Հետաքրքիր ե իմանալ թե ինչու յեն անապատ բերում այդ յերկար գերանները, տախտակները, Լոկ Բոտանն այդ ամենից վոչինչ հասկանալ չի կարողանում:

Մի քանի որ անց նա նկատեց վոր ավազների վրա ինչ վոր բարձրութուն են կառուցում:

Գուցե մարդիկ կամենում են իր հետ մրցող արհեստական ժայռ շինել, վոր ավելի բարձր լինի, քան ինքը, վոր ավելի ուժեղ լինի, քան ինքը...

Եի, հիմար, տխմար մարդիկ, չգիտեք, վոր Լոկ



Բոտանը միակն ե ամբողջ աշխարհում, տիեզերքի ան-  
ասահմանութեան մեջ:

Ամեն առաջնութ, յերբ բացվում ե լուսը, նա մարդ-  
կանց անախորժ գեմքն ե տեսնում ու դիտում ե նրանց  
աարորինակ աշխատանքը:

Ու ի՞նչ անդուրեկան ձայն ե հանում մուրճերի  
հարվածը:

Մի որ, Լոկ Բոտանը բարկացավ և փչեց քամի:

Բարձրացավ ավազը և ողը փոշոտվեց:

Եթ, ինչ լավ կլինի, վոր միշտ, ամեն ինչ, այսպես  
թաղված լինի գորշութեան մեջ, վոր միշտ, ամեն ինչ,  
այսպես մոռալ լինի:

Բայց ավազի միջից նրա աղանջին հասան մուրճերի  
հարվածների ձայները:

Միթե՞ մարդիկ դարձյալ աշխատում են, միթե՞...

Յերբ մի քանի որ ել անցավ, Լոկ Բոտանը տեսավ,  
վոր կառուցվող բարձրութեան դադաթին նայելու հա-  
մար ինքը քիչ պիտի բարձրացնի գլուխը:

Ի՞նչ, ի՞նչպես, ո՞վ ե համարձակվում լինել ավիլի  
բարձր, քան ինքն ե, ավելի...

Մարդիկ արհամարում են իրեն, լավ:

Լոկ Բոտանը քիչ տխրեց:

Գիշերը Լոկ Բոտանը չքնեց, նա յերկար դիտեց  
գիշերվա խավարի մեջ բարձրացող սևութեան խիտ  
սյունը:

Չե, նա չի հանդուրժի, վոր խանդարեն իր թաղա-  
վորութեան, իր հպատակ ժողովրդի հանգիստը:

Եյ, վոր բանը եք իժեր ու մողեսներ, միացե՛ք իրար,  
ապստամբվե՛ք:

Նա հիմա յել չլղայնացավ, չփչեց քամի, այլ փո-  
թորկվեց, բարձրացրեց կատաղած հողմը և ավազու:

անապատում կանգեցին փոշու սյուները, քիչ պարե-  
ցին ողում, հետո արագ սրացան առաջ ու ուժեղ դարկ-  
վեցին նոր կառուցվող բարձրութեանը:

Մի բույն ամեն ինչ, թե խավարը և թե ձայները  
ծածկվեցին մոռալ փոշով և ամեն ինչ լոնց:

Լոկ Բոտանը ժպտաց:

Այ, այդպես նա քեզ կհաղթե, քեզ, վոր մըցում ես  
իր հեռ:

Այդպես:

Հիմա նա կարող ե սանձել հողմը, փոթորիկը և  
ափազին ել հանդիստ թողնել:

Ի՞նչ, ի՞նչպես, բարձրութեանը դարձյալ կանգնած  
մնաց, չքանդվե՞ց նա:

Չե, չե, Լոկ Բոտանը չի գիշի իր դերքերը նա կա-  
րունակե պայքարը:

Մրբեց ճակատի քրտինքը, շարժեց գլուխը, ցնցեց  
իրեն և ուժեղ, ահռելի ձայնով մոնչաց:

Խորքից դուրս յեկան խեղդիչ դադեր և կրակի կեղ-  
տեր:

Աղմուկն ավազների վրա փռվեց:

Նա շարժեց ամբողջ անապատը, ավազը խառնեց  
իրար, արթնացրեց քնած իժերին ու մողեսներին, հետո  
հանդարտվեց և նայեց առաջ:

Լոկ Բոտանը մոռալվեց:

Միթե՞ կառուցված բարձրութեանն ավելի ուժեղ  
ե, քան ինքը, միթե՞...



Վիշկան ամուր բարձրանում եր Լոկ Բոտանում:  
Մի քանի որից հետո բերին մյուս սարքավորում-  
ները և սկսեցին հորսփորումը:



Միզբառով տաքութիւնը նեղում եր մարդկանց, ժյուս կողմից եւ ավազոտ քամին եւ խանդարում, հետո նույնիսկ ավազոտ հողը չեւ եւ կամենում քանդվել, բայց մարդկային կամքը, մարդկային ուժը հաղթեց նրանց :

Առաջին նավթահանքը պատրաստ եր արդեն 1931 թ. նոյեմբերին, իսկ դեկտեմբերին նա սոսկալի ուժեղութեամբ շատրվանեց :

Գետինն այնպես մոնչաց, վոր ամբողջ չըջտուտում լուեց—քարացավ ամեն մի ձայն :

Ինչ եր Լոկ Բոտանի հանած աղմուկը նրա դիմաց : Հետո հողի խորքերից հաղարավոր տոնն նավթը շատրվանեց վեր և սևով ծածկեց չըջտուտը :

Ինչ եր Լոկ Բոտանի վուլկանած կրակը նրա դիմաց : Հետո այնտեղից, չոր գետնի վրայով, չոր գետնի սակով դեպի Բիբի Եյբաթ ձգվեցին յերկար նավթատար խողովակները նավթն այնտեղից փոխադրելու համար :

Հետո սպասնյակ նոր վիշկաներ կառուցեցին ավազների վրա և իժերն ու մողեսները թողին անապատը :

1932 թ. սկզբին Լոկ Բոտանը ձևավորվեց վորպես սուանձին նավթահանք :

Անմարդաբնակ անապատում կառուցվեցին բնակարաններ, ջրի խողովակներ եւ տարան դեպի բայն կողմը և ամբողջովին սարտվեց Լոկ Բոտանի, վուլկանոզ ժայռի, դարավոր թագավորութիւնը :

Պրոֆեսոր Գոլուբյատինն ասում ե, վոր Լոկ Բոտանի խորքերում միլիոնավոր տոնն նավթ կա. իսկ բայլ շէրիկները, աշխատանքի ենտուղիաստները, գետնի տակից կհանեն այդ նավթը. չե՞ վոր նա հարկավոր ե

կոլտոգային արտերում աշխատող տրակտորներին, կառուցված ու կառուցվող գիղանտներին, բարձրագագաթ բերդերը գրավելու համար, չոր, ավազոտ անապատները ծաղկացնելու, կանաչացնելու համար :

1932 թ. Բագու.





ԱԼԻ ՄԱՐԴԱՆ

1.

Ելեքորաքարչի քաղաքային կայարանից ձգվում են ուղիներն, անցնում են մեծ հրապարակի մոտով, մտնում են փողբրիկ կամուրջի տակ, հետո ծուռ ու մուռ, լայն ու նեղ փողոցների և նրանց վրա գտնվող բաղամահարկ ու միահարկ տների միջով հոսում են դեպի առաջ:

Ճանապարհին նրանք միանում են յերկաթուղու ուղիներին, մերթ ամրողջապես ձուլվում են, քիչ հետո խաչաձևում են նրանց, հետո անջատվում, անհետանում և հոսում փոշոտ փողոցներով:

Յերբ ելեկտրաքարչն անցնում է սև ու նավթոտ պատեր ունեցող տների մոտով, դանգում է և նրան ձայնակցում են ծխնելույղները, դեպի յերկնքի կապույտը յերկարած գործարանների բազմաթիվ սուլիչներն, այրվող վառարանների, պտավող անիվների և հոսող նավթի, ջրի ձայները:

Առավոտյան, յերբ առաջին ելեկտրաքարչը կանգ է առնում ասֆալտած փողոցի մոտ, այն ժամանակ վազոններից դուրս են թափվում Պյատակովի անվան նավթաթոր գործարանի բանվորները և դեպի աշխատավայր են վազում:

Ելեկտրաքարչը համարյա դատարկ է հեռանում այդտեղից:

2.

Պյատակովի նավթաթոր գործարանը: Հսկայական մի տարածութուն է բռնել նա: Մեջտեղից կլավել է յերկու մասի և վեր բարձրացող պարիսպները գոյացրել են այն ճանապարհը, վորտեղով անցնում է ելեկտրաքարչը:

Ամբան արևի ճառագայթները պարում են փողոցի փոշիների հետ:

Գործարանի վերևի մասում հպարտ կանգնած են մեծ չաները, վորոնք իրենց մեջ տեղավորում են նավթահանքերից յեկած հում նավթը: Այդտեղ նրանք տաքանում են, մաքրվում են, աղատվում են ավելորդ կեղտերից և հոսում են դեպի գործարանի ներքևի մասը:

Վերևի մասից, պարսպի միջով փողոց են դուրս գալիս բազմաթիվ խողովակներ, քիչ հետո անհետանում են հողի տակ, անցնում առաջ, վերևով ուղիներն են ձգվում, յերկարվում, հետո խողովակները նորից են դուրս գալիս հողի կրճքից, ձեղճում են գործարանի ներքևի մասի պարիսպն, անցնում առաջ, իրենց հետ տանելով վերևի մասից հոսող նավթը:

Պյատակովի նավթաթոր գործարանը: գործարանը:

Մեծ դռների առաջ կանգնած է դռնապահն, իսկ պատին կպցրած է փողբրիկ մի ցուլցանակ.— «առանց թույլատրության ներս մտնելն արգելվում է»:

Պյատակովի նավթաթոր գործարանի ներքո: Ահա փողբրիկ արխեր և նրանցով հոսում են ջրեր. տաք ու պղտոր են:

Մովի ջրից է ուրեմն աղի յեկ կլինի:



Նրանց միջով անցնում են խողովակներ, իսկ սրանց  
ցից գոլորշիներ են դուրս գալիս և շարունակ վաչչում  
են:

Հանկարծ այդ խողովակները բարձրանում են վեր,  
թափվում են մեծ ուղեբլուարների մեջ, հետո այստե-  
ղից կրկին առաջ են գնում:

Նավթատար խողովակներով նավթը դեպի վառա-  
բաններն և հոսում, իսկ վերջիններիս մոտ կանգնած  
են կաշեգարները և աշալուրջ հսկում են ջերմաչափը:

Յեթե տաքության աստիճանն ընկնի կամ բարձ-  
րանա, այն ժամանակ նավթը լավ չի թորվի և ահա-  
դին վնաս կլինի. դրա համար հարկավոր է, վոր կաշե-  
գարն զգուշ լինի և, հարկավոր դեպքում, փոքրիկ ա-  
նիվը պտտեցնի կամ դեպի աջ կամ դեպի ձախ:

Մարդու հասակի մետր ու կես բարձրությունն ու-  
նեցող հաստ պատերով են շրջապատված այդ վառա-  
բանները:

Նրանց միջով անցնում են նեղ անցքեր, փորոնք  
միջնադարյան բերդի անցքերի են նմանվում, վորտե-  
ղով շարժվում են աշխատող բանվորները:

Տաքությունը, գոլորշին դիպչում է նրանց դեմքե-  
րին, իսկ յերբ նրանք դուրս են գալիս այդտեղից, կանդ  
նում են աղառ տարածության վրա, նավթի հոսն է  
նրանց ջրներին կպչում և հովն ել համրուրում է դեմ-  
քերը:

3

Այս նավթաթոր գործարանի գրասենյակն է: Փոք-  
րիկ մի սենյակում յերկու յերիտասարդներ նստած խո-  
րասուզված են աշխատանքների մեջ. ինչ վոր դժադ-  
բություն են գծում: Հարևան սենյակը լաբարատորիա

յն: Այդտեղ կան բազմաթիվ խողովակներ, նրանց մեջ  
կան դույնդույն հեղուկներ, իսկ մոսներն ել աշխա-  
տող մարդիկ կան, վորոնց ճակատներից քրտինքի կա-  
թիլներ են կաթում:

Դրոսում, գետնին թափված խողովակների միջով  
բարձրահասակ մեկն արագ քայլում է առաջ և, կար-  
ծես, թև խոսում է իր հետ:

Աղմկոտ քայլերով մեկը մտնում է կառավարչի  
կարիներ:

Պյատակովի անվան նավթաթոր գործարանի կա-  
ռավարիչը:

Միջահասակ մի մարդ է:

Հազած է կապույտ բաճկոն և գլխին ունի կաշվե  
սև գլխարկ:

Աչքերի վրա կախված են թավ ունքերը:

35-36 տարեկան հաղիվ լինի նա:

Դրաված դիրքը պատասխանատու յե և կարեւոր:  
Կուսակցական է:

Նա հմուտ է իր աշխատանքին, ղեկավարելու ջիղ  
ունի:

15 տարի անընդհատ բանվոր, սև բանվոր է յեղել,  
իսկ հիմա, հասկանալի պատճառով, առաջ է քաշվել:

— Ի՞նչ կա, ընկեր Նիկոլայն—հարցնում է նա կա-  
թիներ մտնող ինժեներից.

— Նա ելի յեկավ—ասում է ընկեր Նիկոլայնը:

— Ո՞վ:

— Ալի Մարդանը:

— Նա՞

— Նա:

— Այդպես ուրեմն:

— Ասում է յես Պյատակովից չեմ հեռանալ:



կառավարիչը յերկար մտածում է :

Դեմքը ժպտում է :

— Նու, յեթե այդպես է, пускай и будет так :

— Харошо — ասում է ինժեներ Նիկոչինը և դուրս է գալիս կառավարչի կարիներտից :

Ինժեներ Նիկոչինը :

Նա ավելի բարձրահասակ է, քան կառավարիչը և լայնաթիկունք :

Հագնված է հասարակ, վորպես բանվոր և հենց տեսնողն էլ այդպես կկարծե :

Ունի բարձրագույն ուսում և շատ էլ փորձառություն :

Բայց դիտի մրա, արևի ճառագայթների պես, դեղին մաղերն են թափված :

Դեմքի կարմրության մեջ յերևում են շատ սև աչքեր :

Նրա մասին ուսու կաշեգործներից մեկն ասում է .

Старый инженер но простой человек, свой парень и хопший работник.

(Հին ինժեներ է, բայց հասարակ մարդ է, մեր տղան է և լավ էլ աշխատող է) :

4

Նավթայուղային բաժնի, վառվող վառարաններից թիչ հեռու, կա փոքրիկ մի բուռկա, իսկ նրա առաջ դրած կա մի սեղան, մի յերկար նստարան, ջրով լիքը մի մեծ ջրաման :

Քիչ հեռվում վառվում են վառարանները :

Յերիտասարդ տեխնիկ Նիկոլայ Վարլամովը :

Ընդամենը 22 տարեկան մի յերիտասարդ է և Հոկտեմբերյան հեղափոխության անվան նավթաթոր տեխնիկումի ուսանող :

Այժմ սրահատիկայի յե յեկել նա :

Հենց այս բուռկայի նա մի վառարանից դեպի մյուսն է վազում և աշալուրջ դիտում է ջերմաչափերը :

Նա շատ շուտ-շուտ գրպանից հանում է բալակա-նին կեղտոտված թաշկինակը և սրբում է ճակատից հոսող քրտինքը :

Դեմքից անբաժանելի յե ժպիտը :

Նա կենտրոնացած ուշադրությունը հասել է վառարաններին և շարունակ նրանց աստիճաններն է կանոնավորում :

Շատ անգամ նա իր տեղը թողնում է մեկին, իսկ ինքը դեպի փորձարանը գնում՝ ստուգելու ստացվող նավթած թերքների վորակը :

Յերբ նրա ձեռքերը կեղտոտվում են, նա մոտենում է պատի տակ գտնվող մի փոքրիկ ծորանի և բենզինով մաքրում է այն, իսկ այդ բենզինը նեղ մի խողովակով հոսում է դեպի մի ուրիշ տեղ՝ ոգտադործվելու :

Ժամանակ առ ժամանակ նա շարժվում է դեպի բուռկան, անցնում է ներս, թիչ հետո դուրս գալիս այնտեղից, մոտենում է իր հետ սրահատիկայի յեկած ընկերներին և ինչ վոր ցուցմունքներ անում : Յերբ յես մոտեցա նրան, յերբ նա ինձ ծանոթացրեց իր և աշխատանքի հետ, այն ժամանակ կամեցա իմանալ, թե ո՞վ է նրանց ղեկավարող գլխավոր ինժեները, վորի հետ էլ կամենում եյի տեսնվել :

— Ալի Մարդանը, — պատասխանեց նա :

— Վո՞րտեղ կարելի յե տեսնել նրան :

— Այ, են բուռկայումն է հիմա :

Յես շարժվեցի դեպի այն կողմը :



Քուզկային հասնելուն պես, դուռը բացվեց և մի-  
ջից դուրս յեկավ մեկը:

— Դո՛ւք եք Ալի Մարդանը—հարցրի յես:

— Այո—պատասխանեց նա—յես եմ, յեթե հետս  
գործ ունիս, քիչ սպասիր, տղերանցով անցնեմ, տես-  
նեմ ինչպես են գործերը, հետո կգամ:

Արագ քայլերով հեռացավ բուզկայից:

Յես հայացքով ուղեկցեցի նրան, մինչև վոր նա  
անհայտացավ մեծ վառարանների յետևում:

Այո, այո, դա այն բարձրահասակ մարդն էր, վոր  
քայլում, անցնում էր գրասենակի մոտ թափված յեր-  
կաթյա խողովակների միջով և, կարծես թե խոտում  
էր ինքն իրեն:

Քիչ անց յերեաց նա:

— Եղպես ա, ընկերս, նոր տղաներն առանց իմ ող-  
նության դեռ չեն կարա գործը գլուխ բերել, դրա հա-  
մար ել յես միշտ նրանց խորհուրդներ եմ տալիս, ող-  
նում եմ: Այդպես ա:

Անցանք ներս և նստեցինք սեղանի շուրջը: Նա  
չպրտեց հազի չուստերը, մի վտար դրեց տակին, իսկ  
մյուսն ել կախեց բարձր նստարանից:

Աչքերի խորթթափանց հայացքը հառեց ինձ ու.

— Հա, յես եմ Ալի Մարդանը:

Գրպանից հանեց ծխախոտատուփը և սկսեց ծխել:  
Մուխը քուլա-քուլա վեր էր բարձրանում, իսկ նա  
հիմա բուզկայի բաց պատուհանով դեպի դուրսը,  
դեպի յեռացող աշխատանքն էր նայում:

Աչքերը թարթում էր արագ, հետո սեղանին ըն-

կած «Յենի Յու» (Նոր Ուղի) թերթն և վերցնում ու  
սկսում ընթերցել այն:

Ձեռքերը դողալու փորձ են կատարում, նա այդ  
զգում է, ունքերի տակով նայում է ինձ, հետո հազում  
է:

— Չկարծես, թե ծերացել եմ—ասում է նա—չե,  
չուտ է, դեռ ժամանակը չէ:

Ձեռքերի կաշին մաշկված է և տեղ-տեղ սպիտա-  
կություն է յերևում:

Դեմքի վրա յել այդպիսի տեղեր կան:

Ասես սպիտակությունից քարտեղ են նկարել:

Փոնը կարմիր է:

Ալի Մարդանը:

Ընդամենը 67 տարեկան է նա ու մազերն ել վաղուց  
են սպիտակել:

Փոքրիկ մի ֆես և դրել դլլսին:

Դեմքի կնճիռները ծալվել ու դարսվել են իրար  
վրա:

Յերբ նա խոտում է բարձրաձայն, յերբ նա հուզ-  
վում է, թվում է, թե դեմքին ինքը ծուլն է ավլքանում:

Աչքերում դեռ յերիտասարդություն կա և վառա-  
րանների պես ել թեժ վառվող հուր:

Գուլպաներ չկար հագնի. վտարաց էր, յեղանա-  
կը տաք է: Յերկար ու սպիտակ մի անդրադարձիկ ու-  
ներ և մի յել արևելյան արխալուղ:

Ձմեռն ել էր շատ հասարակ հագնվում Ալի Մար-  
դանը, այն Ալի Մարդանը, վորի մասին ամբողջ նավ-  
թաթոր գործարանը դիտեր, վորին ճանաչում էր ան-  
զամ կենտրոնական գործադիր կոմիտեն, վորին և հի-  
մա պիտի ճանաչեր ամբողջ յերկիրը:



Հնդամյակի հերոսների շարքում Ալի Մարդանը գրավում է իր տեղը:

Գործարանում առում են, վոր նա բուքսիրի յե վերցնում իր հետ մնացած ընկերներին, վոր նա գիտե ամեն աշխատանք, ծանոթ է ամեն ինչի:

Այո, ճիշտ այդպես է Ալի Մարդանը:

Ալի Մարդանի անցյալը:

1864 թ. գյուղի և մասնավորապես իրենց տան համար, յեղել է մի սև ու չարազուշակ տարի:

Այդ ժամանակ, իր ասելով, ծնվել, «աշխարհ» է յեկել ինքը:

Հայրը յեղել է չքավոր գյուղացի:

Մի կողմից կարկուտը, մյուս կողմից ել տուրքերը քամել են նրանց ու տանը հաց չի մնացել:

Հայրն աշխատում եր առավոտից մինչև յերեկո, չհանդատանալով անգամ մի վարկյան, բայց դարձյալ չեր կարողանում անգամ սև, դարե հացով ապահովել ընտանիքը:

Ու մի որ նա ընկել է անկողին և...

Մահացավ նա:

— Ե, եդ մի հին պատմություն է—առում է Ալի Մարդանը, վոր պատահեց սրանից 50 տարի առաջ: Են ժամանակ յես 17 տարեկան ջահել էյի:

Պարտքեր շատ ունեյին, իսկ նրա գիմաց՝ մի հին տուն, մի յեղ, յերկու վոչխար, չորս հավ և հողի մի փոքրիկ կտոր:

Դրանցով ավին պարտքերը և մնացին դրսում, ամպած յերկնքի տակ:

— Ու մի որ—պատմում է Ալի Մարդանը—յերբ մեր սիրտն ել յերկնքի պես ամպած եր, հրաժեշտ

ավինք հորս դերեզմանին և հեռացանք գյուղից, յեկանք Բագու: Գիտես, թե ինչպես եր լալիս մերս: Ե, դա հին պատմություն է:

Սև քաղաքում, վորտեղ նա գործի անցավ, վորպես սև բանվոր, չկար և վոչ մի գործարան:

Բաց տարածության վրա դրված եյին բերանաբաց չաներ, վորոնք լցված եյին թեթև և ծանր նավթով:

Հանքերից նավթը բերում եյին հասարակ սրաքաներով:

— Հիմա յերկար ձգվող խողովակների միջոցով է դեպի մեզ, դեպի մեր փակ չաները դալիս թանկագին նավթը և, առաջիկա պես ել ողջ չի ցնդում նրա մեջ յեղած գազը:

Առաջ նավթի մեկից մեկ ու կես տոկոսն եյին բեռնպին ստանում, իսկ հիմա 5-6 տոկոս:

— Գիտես, նրանց նույնիսկ այդ քիչ բեռնիցն ել չեր հարկավոր լինում, վորովհետև այբրողան չկար, ավտո չկար, իսկ հիմա... Սա հին, անցած պատմություն է:

Առաջ նա Նորելի մոտ եր աշխատում:

Միջահասակ, նույնիսկ, այդ ամենայն իրավունքով կարելի յե ասել, կարճահասակ մի մարդ եր այդ հարուստ նավթարդյունաբերողը:

Հաստ մարդ եր նա և ուներ սև մորուք:

Սկզբում ինքը մեծակ եր ղեկավարում իր նավթահանքերը, սակայն, տեսնելով, վոր ծախսեր շատ կան, միացավ ուրիշներին և դարձրեց «Նորել և ընկ.»:

— Բանվորներս նրան տարին մի անգամ հաղիվ եյինք տեսնել կարողանում:



Մի բանի տարի անց դեպից այժմյան նախախոր  
գործարանի հիմքը և Այլի Մարդանը փոխադրվեց  
այդտեղ :

Սկզբում նա մի փոքրիկ տարածություն եր բռն-  
նում, իսկ հետագայում, հատկապես Խորհրդային իշ-  
խանութի շրջանում, նա փոփոխեց, ընդարձակվեց :

— Մի արի միասին կաթսաներով անցնենք—ընդ-  
հատեց նա իր պատմությունը— հետո ելի...

Միասին դուրս յեկանք բուրդային :

Անցանք սարսպանման պատերի միջով :

Տաքությունը լիցում եր մեր գեմքը :

Կանգնեցինք վառարանների մոտ :

Նա մոտեցավ կաշեգարին ու .

— Հը՞, վո՞նց ե :

— Կալ ե :

— Գիտե՞ս—դարձավ ինձ—բավական ե մի աստիճան  
բարձրանա տաքությունը. կաթսան իսկույն կալաթե .  
իսկ դա վնաս կտա մեր բանվորներին, մարդկանց կզո-  
հե և հնգամյակի կատարումը կուշանա :

Նա ինքն, անձամբ, աստիճաններին նայելուց հե-  
տո, մոտեցավ ինձ ու .

— Լսիր, յես քեզ մի փոքրիկ պատմություն տեսմ :

Վառեց ծխախոտը :

— Առաջ մեր նախադրյալին բաժինը 10 կաթսա  
ունեիր : Իրանցից մեկին «Իվան Գրոզնի» եյինք անվա-  
նում : Ինչ գիտես, թե ո՞վ ե իվան Գրոզնին : Իս ռուս,  
չատ հին թագավոր եր, շատ չար, խիստ : Ասում են՝  
նա իր ձեռքով սպանել ե իր սեփական վորդուն : Հա,  
մեր եղ կաթսան մեծ եր, ահարկու հսկայի պես  
մռնչացող և, ռուս բանվորներից մեկը, վորին գործա-  
գուլի ժամանակ սպանեցին, քիչ նայեց նրան ու ազդերը,

սա իսկական իվան Գրոզնին ե : Եղ որվանից ել հենց  
եղպես ել մնաց : Են որը, հեղափոխությունից քիչ ա-  
ռաջ եր, կաշեգարի անխուսափելի շնորհիվ բարձ-  
րացավ «Իվան Գրոզնու» տաքությունը և նա պայթեց,  
փշուր—փշուր յեղավ, փչացավ : Քիչ անց Նիկոլայի կա-  
ռավարությունն ել տրաքվեց, փշուր—փշուր յեղավ :  
Ու ինչպես չեր կարելի հին որերը վերականգնել, են-  
պես ել մենք չկարողացանք «Իվան Գրոզնուն» կյանք  
տալ :

Շարժվեցինք դեպի բուրդան :

— 1888 թվին եր, կարծեմ—սկսեց ելի Մարդանը,  
վոր ասացին, թե, ախր եղ ժամանակ Ադրբեջանը Ռու-  
սաստանի ձեռքին եր, հա, ասացին, թե Նիկոլայը զա-  
լիս ե Բագու : Ծովից, յերկար ու ուղիղ ձգվող վո-  
ղոցով կարմիր, մետաքսե մի մեծ լայն կտոր փոսեցին,  
իսկ՝ գործարանի դռան գլխից կախեցին արծվի յերկ-  
գլխանի նշանը : Եղ, ինչպես ասում եյին, վսեմափայլ  
տերը, քայլում եր մետաքսե կտորի վրայով :

Այլ Մարդանն աչքերը հառեց դեմքին ու .

— Դու յերիտասարդ ես, եղպիսի բաներ չես տե-  
սել, դժվար թե հասկանաս : Այ, յուրիչ եր Շահում-  
յանն, են մեծ, շատ մեծ կոմունիստը : Նա գեանի վրա-  
յով եր քայլում և վոտնամաններն ել նախոտում  
եյին : Ո՞վ եր մեր սրտին մոտիկ, թագավո՞րը, թե՞  
Շահումյանը... ինչ ասեմ, դու արդեն եղ հասկանում  
ես...

1892 թվի մեծ սովից ու խոլերայից հետո բանվոր-  
ների գրությունն ավելի վատացավ :

1894 թվին, փորձի համար, գործարան բերին մի  
բատարեյա :

Լավ եր :



Կարճ ժամանակ անց՝ 10 էլ բերին:

— Գիտես, առաջ մեզ համար շատ դժվար էր նավթը կամ բենզինը մի կաթսայից մյուսը տեղափոխելը, բայց հետո հեշտացրինք եղ... Ինչպե՞ս... Շատ հասարակ: Մեկը մյուսից 10-15 սանտիմետր բարձրությամբ վրա ելինք դնում և հեղուկն ինքն էր մեկից մյուսը հոսում:

1905 թվին նա մասնակցեց նավթայինների առաջին մեծ գործադուլին:

Սովբ մի կողմից էր, մյուս կողմից էլ հայերի ու թուրքերի կոտորածը:

1912 թվին, ուղիղ 52 որ, ընկերներին հետ միասին գործի չզննացի—ասում է նա. ամիսը տալիս ելին 24 ու և ելի ուրիշ վոչինչ: Խորհրդային իշխանության առաջին տարիներին, յերբ յես դարձյալ կաջեզար էյի, սաղանում էյի 80 ու., հագուստ, տուն սապոն, վոտնաման և ուրիշ պետքական իրեր:

Անցնող հետագա տարիներն առանց գործադուլի չեն յեղել:

— Յես շատ լավ հիշում եմ 1918 թիվը—ասում է նա. եղ ժամանակ Շահումյանը յեկավ մեր գործարանը և մի զեկուցում կարդաց: Սովի, տանջանքի ու թշվառության տարի յեր: Մուսավաթը մի կողմից էր ցույց տալիս իր զեմքը, դաշնակը մյուս կողմից, հետո Անգլիայի մասին էլ ձայն կար: Ել ժողովրդի, բանվորության ու գյուղացու մեջ ուժ կմնա՞... Շահումյանն էղ մասին խոսեց մեզ հետ և ասաց.—պետք է կազմակերպված դուրս գնաք հեղափոխության, պետք է հետևենք Հոկտեմբերին... Հեռանալիս բասաց. ելի կգամ ու դեռ շատ կխոսենք այս մասին և....

Այի Մարդանը լռեց:

Շարտեց բերնի դլանակը:

Բիչ հետո նորը վառեց:

— Գնաց, բայց էլ չվերադարձավ նա, էլ չեկազ մեզ մոտ զեկուցելու, էլ նրան չտեսանք... Շատ ուշ իմացանք, վոր Ախչա Կոլյմայի անապատներում սպանել են նրան՝ իր 25 ընկերների հետ:

Ջղայնացած կտոր—կտոր արեց ձեռքի ծխախոտը, շարտեց, հետո բուռնցքը դարկեց սեղանին ու.

— Բայց վո՞նց չիմացանք այդ, հը՞, ինչպե՞ս ծածուկ կատարվեց այդ ամենը, վոր...

Հետո անդլիացիները յեկան և տեղական կուսակցությունների միջև ավելի սրվեց պայքարը:

Սմեն մեկը ժողովրդին ազատություն էր խոստանում, բայց վոչ մեկն էլ այդ չէր տալիս:

— Յես քեզ մի փոքրիկ բան էլ պատմեմ եղ չըջանից: Անեկդոտ չի: Ազատություն, հա ազատություն, գոռում էյին մուսավաթները, դաշնակներն ու անգլիացիները, բայց ժողովուրդը չէր կարողանում տանել եղ «ազատությունը»: Սմեն որ կրակոցի ձայներ էլինք լսում և շատ մարդիկ էյին սպանվում: 1920 թվի սկզբին, մի ցուրտ ու խավար գիշեր, սովից մահացած դիակները վրայով, շորերի մի կապոց կոնատակին, պառավ մի կին քանցում էր մի նեղ փողոցով:

— Ո՞վ ես-փողոցի ծայրից դալիս և մի ձայն:

Կինը չի լսում նրան, ախանջները քիչ ծանր էյին, և լուռ առաջ էր քայլում:

— Ո՞վ ես-կրկնում է ձայնը:

Նը գիշերապահն էր:

Քայլում է առաջ:

Կինը դարձյալ չի լսում:



— Ե՛յ, ձայն հանի՛ր, ո՞վ ես, ապա թե վոչ...  
ալեկի բարձր ե գոռում գիշերապահը:

Բարձրացնում ե հրացանը:

Այս անգամ պառավ կինը լսում ե նրան և կանգ  
ե առնում:

— Հը՞, ի՞նչ ա:

— Ո՞վ ես:

Դեպի իրեն ուղղված հրացանը տեսնելով. վախից  
սկսում ե դողալ այդ պառավ կինը:

— Խեղճ եմ, մի սպանիր, — հաղիվ կարողանում ե  
ասել նա:

Ձինվորը հրացանն իջեցնում ե և մոտենում ե  
նրան:

— Ո՞վ ես դու:

— Յե՞ս:

— Այո:

— Յես եմ:

— Ինչո՞ւ յես դուրս յեկել փողոց, ի՞նչ իրավուն-  
քով — հարցնում ե գիշերապահը — գիտե՞ս գիշերվա  
անունը:

— Յես փոչինչ չգիտեմ, յես փախչում եմ:

— Ի՞նչ, շան պառավ, մենք պայքարենք, ձեզ ա-  
զատություն բերենք, իսկ դուք փախչե՞ք — գոռում ե  
գիշերապահը:

Պառավ կինը ձեռքը մեկնում ե դեպի գետնին ըն-  
կած դիակը և:

— Սա յե ձեր բերած ազատությունը, հը՞:

— Լսիր, քավթառ, դու համարձակվում ես ծու-  
սավաթներին դեմ գնալ:

Գիշերապահը քաշում ե հրացանի վոտը և պառավ  
կինը փոխում ե գետնին:

— Այ, եդ եր մուսավաթների բերած «ազատու-  
թյունը» — վերջացնում ե իր պատմությունը Ալի Մար-  
դանը:

Հետո յեկավ 1920 թվի ապրիլյան հեղափոխու-  
թյունը, վորին նա յեւ մասնակցեց:

Հեղափոխության առաջին օրերին, նավթային ար-  
դյունաբերության մեջ ենքան ել խոշոր բեկում չնկատ-  
վեց, այդ մասին հայտնի յե ընկ. Լենինի նամակը,  
սակայն քիչ անց հաղթահարվեցին ղժվարություն-  
ները:

Պատահովի անվան նավթաթոր գործարանն սկսեց  
ավելի մեծանալ:

— Սեր բաժնում դրինք յերկու կաշոնա, վորոն-  
ցից հիմա մենք բնդին ենք ստանում:

— Յերբ հարվածայությունն ու սոցմրցումը մըտ-  
ցրին գործարան — շարունակում ե Ալի Մարդանը —  
մենք բոլորս ել կպանք նրան, փախչողներ ել յեղան,  
և հիմա օրական 100 հաղար փութ նավթ ենք տալիս,  
իսկ Նորելի ժամանակ 65 հ. փ. հաղիվ եր ստացվում:

Կաշեզարի պաշտոնից առաջ քաշվեց գրադուզչիկի  
պաշտոնին. այսինքն ջերմաչափ:

— Յերբ տվին մեր գործարանի հնգամյա պլանը,  
մենք նստեցինք, խորն ուսումնասիրեցինք այն և, վո-  
րոչեցինք հարվածայությամբ, սոցմրցմամբ կատա-  
րել:

Ի՞նչ լուելուց հետո նա դարձավ ինձ ու:

— Դու գիտե՞ս, թե ինչպես մենք կատարեցինք  
հնգամյակը յերկու և կես տարում: Այ, եդ եսպես  
յեղավ: Ասենք թե մի կաթսան մի օրումը տալիս ա  
100 տոնն նավթ, մենք նրան ստիպեցինք 150—200  
տոնն տալու: Յեվ յեղավ: Յերբ մարդը մեքենայից մի



բան պահանջի, նա չի կարող հակառակել: Այ, եղ-  
եղպետ ե: Այ, որինակ, առաջ հինգ հոգուդ բաղկացած  
բրիգադան փորում եր 30 մետր, իսկ հիմա 40 մետր  
փորում ե 4-ից բաղկացածը:

Նա ձեռքերը պարզեց դեպի ինձ և.

— Նայիր, տեսնո՞ւմ ես, անցյալ տարի յեղավ,  
կարծեմ հունիսի 15-ին եր: Սողոմիակներեց մեկը  
բռնվել եր: Ձուրը մենք ծովից ենք բերում, իսկ ինչ-  
պես գիտես, նրա մեջ աղ կա, եղ աղն ել հենց փակել  
եր խողովակը: Ներան ահադին գաղ եր հավաքվել և  
անցնել չեր կարողանում: Յերբ յես բաց արի անցքը,  
գաղը վառվեց և... ձեռքերս ել ալքվեց, յերեսս ել...  
Ամիս ու կես պառկեցի հիվանդանոցում ու, ինչպես  
տեսնում ես, չմեռա...

Վառեց ծխախոտը:

— Մի քանի ամիս անց Անդրկենտրոնումն ինձ աշ-  
խատանքի հերոսի կոչում տվեց, վորոչեց ազատել աշ-  
խատանքից ու թոշակով պահել, բայց... Հա, կարող  
ես գրամոտաս կարդալ...

Այս ասելուն պես՝ արխայուղի ծոցագրպանից հա-  
նեց մի թուղթ և մեկնեց ինձ:

Ահա նա:

«Գրամոտա: Պրոխտարներ բոլոր յերկրների, միտցե՛ր Ա-  
զրբեջանի կենտրոնական ֆորժավըր կամիտե. Սարնուրդներե բան-  
վորա-գյուղացիական, կարմիր բանակայիններե, ծավայիններե դե-  
պուտատա:

Նկատելով ընկ. Ալի Մարդանովի բացառիկ աշխատանքներն  
ԱՍՍՀ նավթային հնգամյակի ասպարեզում. վոր արասնայտվեց  
հարվածա-յուռթյան մեջ նրա կառարման գործում (48 տարվա  
արտադրական ստամ) վորոշում ե նրան առ աշխատանքի հերոսի  
կոչում:

Նախագահ՝ (տոտրազրություն)

Քարառդար՝ (Մտորազրություն):

— Հա, վորոչեցին աշխատանքից ապաստել, բայց  
յես չհամաձայնվեցի: Գնացի գործարանի կառավարչի  
մոտ և բասցի- «յեղբայր, վոչ պրագուլչիկ եմ, վոչ  
սիմուլյանտ, վոչ ել ծուլլ. ինչո՞ւ յեք ինձ հեռացնում  
գործարանից»: Նա, թե. «արդեն ծերացել ես» և այլն  
և այլն: «50 տարի աշխատել եմ, եստեղ մեծացել ու  
եոտեղ ել պտապել եմ. ուզում եմ, վոր ես-  
տեղ ել մեռնե մ.» ասում եմ յես նրան «նու, յեթե  
կտեսնեք, վոր ել չեմ կարողանում լավ աշխատել.  
մնաս եմ հասցնում գործարանին. են ժամանակ, կամ  
յես կհասկանամ ու կհեռանամ, կամ դուք ինձ  
կվռնդեք»: Նա չեմ ու չում ե անում, իսկ յես... «ախր,  
հիշտ ա, յես ծերացել եմ, ամա դեռ ուժ ունիմ...  
ինձեներ Նիկոլային եսոր ինձ տեսնելուն պես կանդնեց-  
րեց ու «опять пришел?» հարցրեց. «Да»  
պատասխանեցի յես: Նա արագ հեռացավ ինձանից ու  
դեպի կառավարչի սենյակը մնաց: Մի որ գործարանի  
բժիշկը նայեց ինձ ու խորհուրդ տվեց, վոր թողնեմ  
աշխատանքը: Յես նրան չլսեցի: Շան տղան ինձ գոռով  
ուզում եր հիվանդ դուրս բերել: Են ժամանակ խոր-  
հուրդ տվեց, վոր որական 4 ժամ միայն աշխատեմ:  
Բայց յես առավոտից մինչև յերեկո եստեղ եմ լինում:  
Ինչո՞ւ. այ ասեմ: Նայիր դեպի դուրսը: Իու տեսնում  
ես նրանց:

Յես. բուսկայի պատուհանով դեպի դուրսը  
նայեցի և վառվող վառարանների մոտ կանդնած տե-  
սս տեխնիկումից պրակտիկայի յեկած ուսանողներին  
և տեղակառն բանվորներին:

— Նրանց բոլորին յես եմ սովորեցնում. — ասաց  
նա. ախր, չե վոր հիմա յես հերթապահ ինձեներ եմ,  
հասկանո՞ւմ ես, ինձեներ:



Քիչ լռելուց հետո շարունակեց .

— Ճիշտ ա, կրթութիւնն չունեմ, փոքր ժամանակ է տարի դպրոց եմ գնացել, ամա անգրագետ տեղովս, առանց համալսարան վերջացնելու ինժեներ եմ, հասկան՞ում ես: Այ, գործարաննա յեղել իմ դպրոցը, հասեղ եմ յես պրակտիկա ձեռք բերել և, հավատացնում եմ, ինժեներէի չափ հիմա բան գիտեմ: Յերբ թուրքական հին ալբուրբենը վերացրին, մտածեցի. «չէ, Ալի Մարդան, կույր մնացիր, ել չես կարող թերթ կարդալ»... Յերկար համբերել չկարողացա. խնդրեցի մեկին, վոր ինձ ծանոթացնի նոր ալբուրբենի հետ: Յերկու շաբաթ անց յես «Յենի Յոլ» կարդացի: Չե, հիմա թուրքերի բանն ել ա լավ. շատերին գործից ազատում ու սովորելու յեն ուղարկում: Առաջ ո՞վ եր տեսել եսպիսի բան:

Մի քանի ամիս առաջ ընկ. Ալի Մարդանն, Ազնեյ-թի հաշվին Կիսլավոդսկ եր գնացել:

— Բայց ինչ լավ տեղ եր—աասաց նա:

Այս նախաթոր գործարանը տալիս ե յերկրին. թորած նախ, բենդին, վազելին, յուղ, պարաֆին և սւրիչ շատ նյութեր:

— Յեղբայր, ամբողջ աշխարհը կապլած ե մեզ հետ. ուզենք մի որումը սաղին մեր ճանկերում կխեղդենք:

— Գիտես ի՞նչ,— յերկար լռութիւնը խզեց նա— ամեն ինչ ասացի քեզ, բացի մեկից, վորը... Ճիշտ ե, եղ ինձ համար ամոթ ա, ամա... ախր. յես կուսակցութիւնն անգամ չեմ, ե՞ր...

— Ինչո՞ւ — գարմացած հարցրի յես:

— Իմ ունեցած ուժերովս հաղիվ եմ կարողանում

կատարել պարտքս, իսկ յեթե կուսակցութիւնն շարքերը մտնեմ, են ժամանակ պիտի ավելի աշխատեմ...

Քիչ լռելուց հետո շարունակեց .

— Ճիշտ ա, ինչ անում եմ, եղ հենց կուսակցութիւնն համար ա, ամա դե... Չե, դուցե հենց կուսակցութիւնն մեջ ել մտնեմ, վորովհետեւ... ախր, չե վոր ամբողջ կյանքս նրանն ա...

— Հա, դիտե՞ս— ավելացրեց նա,— յես իրավունք ունեմ ձրի տրամվայ նստել, իսկ տարեկան յերկու անգամ յերկաթուղով ճանապարհորդել, բայց յես ես դործարանից բացի ուրիշ տեղ չեմ գնալ, չե՞ վոր կյանքս հասեղ ե անցել, չե՞ վոր եստեղ մասնակցեցի հնգամյակի կատարմանը... հը՞: Ներեցեք, ինձ տղաները կանչում են:

Դուրս յեկալ բուդկայից և դեպի վառվող վառարանները շարժվեց:

Բարձրացող պատնէշների յետևում անհետացալ նրա բարձր հասակը:

Ահա այս ե աշխատանքի հերոս, հնգամյակի հերոս ընկեր Ալի Մարդանը:

Բագու 1931 թ.



## ԱՍՏԱՅԼՏՎՈՒՄ Ե ԲԱՂԱՔԸ

ԲԱՂԱՔԻ ՇԻՄՆԱԿՐՄԱՆ ՅԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Թե՛ յերբ և չիմնվել այս քաղաքը, գիտեն միայն անցած, հեռացած դարերը, վորոնք հիմա թաղվել են անհայտութեան մեջ, կասպիականի կապույտ ալիքների գրկում: Հիմա հաղիվ թե մարդ կարողանա խորատուղվել այդ ալիքների մեջ, գտնել անցած դարերն ու լսել նրանց պատմությունը՝ այս քաղաքի հիմնադրման մասին:

Սակայն հաստատ ե այն, վոր 10-րդ դարի արաբական աշխարհագետներ Մասուդին ու Մուկադդասին հիշում են այս քաղաքը, վորպես նավթային մի վայր՝ Շիրվանի շրջանում:

Հաստատ ե այն, ինչ պատմում ե գանձակեցի հրոշակավոր եպիք պոետ Շեյխ Նիզամին իր «Իսկենդար նամեյի» մեջ, իբր թե Աբդուսանդր Մակեդոնացին կամենալով պաշտպանել նախնային, Բերդայի թագուհուն՝ նրա վրա հարձակվող թշնամիներին, յեկավ մեր կողմերը և իբր թե նա նույնիսկ յեկել և այս քաղաքն, իսկ այտեղ նրա պատվին մեծ խնճույք և տվել ինքը հերոս Սաադան բազմեցին:

Անժխտելի յեն հին դարերից բարձրացող յերկու յերկնամբարձ աշտարակները—Սինկալյան և Կույսի աշտարակը:

Վերջապես անառարկելի XV դարի արաբական

աշխարհագրագետ Աբու-Աբ-Ռաշիդ Բակավիլի գրածը. «Բաքուի... քաղաք, վոր գտնվում ե իսպաղան ծովի ափին, Շիրվանի շրջանում, ծովի ջուրը վանում ե նրա պատերը... շատ մեջիղներ ունի... այտեղ յերկու ամրութուն կա... ծովն արդեն մոտեցել ե նրանց, իսկ մեկն արդեն փլվել ե թաթարների գրավման ժամանակ»: Շատ ճիշտ, բազմաթիվ տվյալներով ապացուցվող բազմաթիվ պատմություններ ել կան շատ ճանապարհորդների մասին, վորոնք յեկել ու անցել են այդ քաղաքով:

Ատում են, վոր նույնիսկ Ստենկա Ռազինը, Պարսկաստանում թափառելուց հետո, յեկավ Բաքու, մեծ հարված հասցրեց Աստարինի խանին և նույնիսկ գերի վերցրեց նրա տղային ու աղջկանը:

Ատում են նա ավարները բաժանեց իր ընկերներին մեջ և փոքրիկ մի կղզում սարքեց մի մեծ խնճույք:

Պատմում են և այն, թե նա նույն իսկ մտել ե Բաքու ու գտնելով այդտեղ շատ գինի, իր պորեբրով հարբեղցողութեամբ և դրադվել և, չգիմանալով տեղացիների հարձակմանը, փախել ե Հաչտարխան: Վրամանք ել ասում են, վոր նա իր համար թագստարան ե ընտրել այժմ իր անունով կոչվող կիրճը:

Գիտե՛ք, թե ինչքան լեգենդներ, հեքիաթներ ունի թաղված այն քաղաքն իր պարիսպների տակ, պարիսպների, վորոնք շինվել են Մասանիդների որոք, հետո անընդհատ քանդվել, նորոգվել են արաբների, սելջուկների, Մոնղոլների, Շիրվանշահների, Մուստաֆա փաշայի, Աբբաս 1-ինի ժամանակ, միայն 19-րդ դարում, ռուսների տիրապետությունից հետո, դարեց վերանորոգումը և հին հեքիաթները, լեգենդները մնացին թաղված հին պարիսպների տակ:



Հորձախ մարդ քանդում և հին պարխալների քարերը, փորում և հողն ու այդտեղից հին, բայց վոչ Հնացած հեքիաթներ, լեզենդաներ հանում:

ԿՈՒՅՍԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ Բագու,—  
վորքան հեքիաթներ կան այս դորը քաղաքում...  
Յն. Զարեհ

\* \*  
\*

Հիմա ծովը շատ և հեռացել էր նախկին ափից, հիմա այդտեղով սրընթաց արշավում և տրամվայը, և նույնիսկ յերկար ել ձգվում և քաղաքային ամենամեծ այգին:

Բայց, չնայած դրան, ծովի ալիքները հենց հիմա յեւ իրենց խորքերում պահում են հին, բայց չհնացած այդ լեզենդան ու ամեն գիշեր, յերբ բարձրանում և հողմն ու փոթորկվում են ջրերը, ալիքները բարձրանում են վեր, շատրվանում են, կամենում են նույնիսկ լիգել աշտարակի պատերը. թափվում են նորից ծովի գիրկը և պատմում այդ հին, բայց չհնացած լեզենդան:

Ասում են, վոր Բագվի խանը մեծ կռվի մեջ եր Ծիրվանի խանի հետ: Ամիսներն իրար յետևից ելին քնցնում ու չէր դադարում նրանց կռիվը, արյան հոսումը:

Ընկնում ելին բազմաթիվ մարդիկ և կռիվը դարձյալ շարունակվում եր:

Պատահեց այնպես, վոր Բագվի խանը գերի վերցրեց Ծիրվանի խանի մինուճար տղային: Շատ, շատ տխրեց Ծիրվանի խանը, յերբ լսեց այդ լուրը, լեւա

իմացավ, վոր նրան, իր մինուճար տղային, պիտի գլուխատեն:

Բեռնավորված ձիերով ու ուղտերով նա վոսկի ուղարկեց Բագվի խանին և խնդրեց, վոր նա խղճա իրեն, չդիտատե իր մինուճար տղային:

Բայց Բագվի խանը վերադարձրեց վոսկիները:

— Թող, թող Ծիրվանի խանն իրեն հայտարարե պարտված, գիջե իր դերքերը և...

Վերադարձողներն ամեն ինչ մանրամասնությամբ պատմեցին Ծիրվանի խանին:

— Վոչ, վոչ, չեմ գիջի իմ դերքերը, յես ինձ պարտված չեմ հայտարարի... բայց տղաս, ինչպես հրաժարվեմ նրանից, ինչպես ազատեմ նրան...

Այն ժամանակ Ծիրվանի խանի յերիտասարդ դուստրը ներկայացավ հորը և խնդրեց, վոր նա թուֆլատրե—իրեն անձամբ դնալու Բագվի խանի մոտ, իր միակ յեղբոր կյանքը փրկելու համար:

Յերեք դր մտածելուց հետո Ծիրվանի խանը տվեց իր համաձայնությունը:

Ու մի գիշեր, յերբ խաղաղ քնած էր աշխարհը և արթուն եր միայն լուսինը, Ծիրվանի խանի միակ դուստրը փոքրաթիվ ուղեկիցների հետ շարժվեց դեպի թշնամու թանակը:

Բագվի խանին հայտնեցին, վոր մի աղջիկ կամենում և տեսնել իրեն:

Բագվի խանն ընդունեց նրան:

Աղջիկը մտավ վրանը, չոքեց խանի առաջ, թեթև բացեց չադրան ու մեղմ շարժեց չրթունքները:

— Սան, յես Ծիրվանի խանի աղջիկն եմ և յեկեյ եմ քեզ մոտ խնդրելու, վոր չգլխատես յեղբորս, վոր... խան, խղճա մեզ...



Բազմի խանը չհավատաց իր աչքերին, իր տեսածին...

Ի՞նչ գեղեցկութուն, ի՞նչ չքնադութուն ունեւ այդ աղջիկը...

Մի՞թե այդպիսի գեղեցկութուն կարող է ունենալ շուշանը կամ նունուֆարը, միթե՞ այդպիսի չքնադութուն կարող է ունենալ վառ, ծիրանագույն արշալույսը, վոր ինքը տեսնում է ամեն որ, կամ թե կասպիականի սպիտակ փրփուրը, անգամ տիեզերքի գրկում լողացող լուսինը:

— ... Խան, խղճա ինձ...

Նա կարծես թե սթափվեց մի խոր քնից: Ձեռքը տարավ դեպի ճակատը, շփեց այն, հետո հանեց վճիռը:

— Աղաաված ե յեղբայրդ, տար նրան քեզ հետ:

Շիրվանի խանի դուստրը ժպտաց, հետո նորից ծածկեց դեմքը և դեպի դուռը շարժվեց:

Խանը հայացքով նրան քիչ ուղեկցելուց հետո կամաց ասաց.

— Հայանիբ հորդ, վոր յես յերկու շաբաթից հետո իր հյուրը կլինեն:

\* \*

\*

Տասնյակ վոչխարներ մորթվեցին, կթեցին հարյուրավոր կովեր և չքեղազարդ վրանների տակ ընդունվեց սիրելի հյուրը, Բազմի խանը: Յերեք զիշեր, ու չորս ցերեկ յեղավ մեծ ու չտեսնված խնձույթ:

Հետո, յերբ խաներն առանձնացան, Բազմի խանը դարձավ Շիրվանի խանին, ու.

— Մինուճար տղայիդ չգլխատեցի, կյանքը նվիրեցի քեզ, նրա վրխարեն տուր ինձ աղջիկդ:

Տասն որ Շիրվանի խանը խորհեց այդ մասին, խորհրդակցեց մեծ պալատականների, գիտնականների հետ, հետո հանեց իր վճիռը:

Յեզ յոթ որ ու յոթ ցերեկ քեֆ յեղավ, հարսանիք, վորին մասնակցում էր վողջ աչխարհը:

\* \*

\*

Իններորդ ամիսն ել անցավ յերջանկության մեջ և շուտով ել իններորդ որն կանցնե:

Ու խանն աչխարհի բոլոր ծայրերից բժիշկներ, աստղագիտներ ու գիտնականներ հրավիրեց, իմանալու տղա՞ թե... աղջիկ կլինի ծնվելիք դավալը:

— Տղա, հասկանում եք, տղա յեմ ուզում յես, վոր պարծանքով նայեմ նրան, ինչո՞ւմ, վոր մեծանա ու աջ ձեռքս, դորքերիս հրամանատարը դառնա, մահվանիցս հետո պետք է ամբողջ Բագուն տիրե և... ժառանգ, հասկանո՞ւմ եք, ժառանգ եմ ուզում...

Բայց իններորդ որն ել անցնելուց հետո, ծնվեց մի աղջիկ, իսկ մայրն ել մահացավ...

Յերբ խանը լսեց այդ լուրը, կատաղեց, մոռաց այնպես, վոր անգամ կասպիականի այլիքներն ել արտասվեցին.

— Նզովվի նա, նզովվի նրա ծնունդը... հեռացրեք նրան պալատից, աչքս չտեսնի և չիմանամ, վոր յես աղջիկ եմ ունեցել... նզովվի նա, վոր դժբախտացրեց ինձ՝ չքնաղ կնոջս ինձնից խլելով:

Պալատական մի ծեր դայակ վերցրեց մանուկին ու թողեց պալատը, թողեց Բագուն:



Գեառը, յերբ հոսում է, ջուրը գնում, հեռանում է նույն տեղից և ել յերբեք նա չի անցնում նույն տեղով ու վոչ վոք ել չի խմանում, թե ո՞ւր հոսեց այդ ջուրը:

Այդպես ել ժամանակն է հոսում և մարդ չի խմանում, թե յերբ անցավ նա, վորտեղ գնաց. միայն գղում է, վոր ինքը ծերանում է, պաղում է յերակներում հոսող արյունն ու մարում է աչքերի լույսը:

Բագվի խանն ել այդպես յեղավ, յերբ շատ ժամանակ անցավ:

Բայց նա դարձյալ չդադարեցրեց իր կռիվները, յերկրե-յերկիր, քաղաքե-քաղաք ու գյուղե-գյուղ պտտելը:

Յերբ հարկահավաքի ժամանակը գալիս եր, հենց ինքն եր վերցնում մտրակն ու ընկնում գյուղերը:

Յեվ ահա, մի գյուղի փողոցով անցնելիս, նա հանկարծ կանգնեցրեց ձին ու յերկար դիտեց յերիտասարդ մի աղջկա:

Աղջիկը չաղբայով ամուր ծածկեց դեմքը և հեռացավ: Խանը մի պահ անշարժ մնաց տեղը, իսկ հիշողութունը դեպի յետ, դեպի յերջանիկ անցյալը վազեց:

Այո, այո, այդ աղջիկը շատ նման էր իր վերջին, իր ամենասիրելի կնոջը... Այո, այո...

Դարձավ դեպի իր մոտ կանգնած մարդիկ ու.

— Բերել պալատ այդ աղջկան:

Հետո մտրակեց ձիուն ու թողեց գյուղը:

Լուրը տարածվեց ամբողջ աշխարհում, թե խանը կամենում է ամուսնանալ Ռախիդայի հետ:

Այն ժամանակ մի պառավ կին յեկավ պալատ ու ինդրեց, վոր իրեն խանի մոտ բաց թողնեն.

— Կարևոր բան պիտի հայտնեմ,—ասաց նա: Դռները բացվեցին նրա առաջ:

Կանգնեց խանի դիմաց ու,

— Գիտե՞ս, թե ինչ ես ամուսնում դու, գիտե՞ս, թե ո՞ւմ հետ ես կամում ամուսնանալ...

— Ի՞նչ...

— Ռախիդան ջո դուստրն է, խան:

— Ի՞նչպես:

— Դու նրան տասնյոթ տարի առաջ վնդեցիր պալատիցդ, նդովելով նրա ծնունդը:

— Ո՞վ ասաց, վոր նա իմ դուստրն է, ո՞վ ես դու,—գոռաց խանը:

— Յես ջո պալատի դայակն եմ, վոր վրկեցի նրա կյանքը, խնամեցի նրան ու...

Տասն ուր Բագվի խանը խորհեց այդ մասին տառ դիչեր անջուն լուսացրեց, յերկար դիտեց Ռախիդային, իր... դատեր աչքերը, այտերը, ճակատը, մազերը և վերջը հանեց իր վճիռը:

— Յես կամուսնանամ նրա հետ, իմ ամենասիրելի կնոջ պատկերի հետ, թեկուզ նա իմ հարազատ գուստրը լինի:

— Հայր, փոխիր ջո վորոշումը, խղճա ինձ...

Բարը մի՞թե կարող է զգացվել, խղճալ մարդու:



Յեկան, յեկան դուռերից ու քաղաքներից, յեկան կանայք ու տղամարդիկ, փոքրերն ու մեծերը, յեկան խնդրելու խանից, վոր նա հրատարվի իր մտադրութունից, վոր նա...

Պանը հանդիստ նստել եր թաղթի վրա, իսկ Ռախիդան սենյակի փանջարաններից հաղիվ եր կարողանում տեսնել դրսում հավաքված մարդկանց, լսել նրանց ձայները:

Ախ, ինչո՞ւ կամ նրանք չեն բարձր, հավասար պալատի բարձրութանը, կամ թե ինչո՞ւ չե պալատը ցածր, հավասար այդ ամբոխի ցածրութանը, վոր նա կարողանա ազատ խոսել նրանց հետ, պատմել նրանց իր վիշտն ու... ինչո՞ւ, ինչո՞ւ ինքը դուռը մը չէ, ազատ, լեռների գրկում, իր սիրելի...

Դրսում աղմուկը սաստկանում եր:

Պալատականներից մեկը հայտնեց խանին, վոր մեկը դրսում գոռում է, թե.

— Իմ սիրելի Ռախիդային յես խանին չեմ տա, յես չեմ թողնի վոր...

— Իեր նրա գլուխը, — ընդհատեց նրան խանը:

Պալատականը դուրս յեկավ:

— Ներս կանչեք Ռախիդային, — պատվիրեց խանը դասն մոտ կանդնած մանկավիհին:

Ներս մտավ Ռախիդան:

Ընկավ հոր առաջ, ու.

— Հայր, խղճա ինձ, հայր...

— Յես քո հայրը չեմ, — սառն արտասանեց խանը, — յես քո ամուսինն եմ, տերը:

— Պան...

Դուռը բացվեց և ներս բերվեց մատուցարանի վրա վրա մի գլուխ:

Պանը դարձավ դեպի Ռախիդան ու.

— Ահա և քեզ նվեր՝ մեր ամուսնության առթիվ:

Ռախիդան մի սրահ նայեց արյունաղախ գլխին ու.

— Ահ, իմ սիրելի...

Յեղ ուշաթափ փռվեց դեռնին:

Լուսթյունը յերկար ժամանակ տիրապետող եր:

Յերբ նա բարձրացրեց գլուխը, դեմքը դեղնել ու աչքերի լույսն ել կարծես մարել եր: Շեշտակի մի հայացք զցեց խանի վրա, ու.

— Լավ, յես կդառնամ քո կինը, միայն վոչ այս տեղ, վոչ այն պալատում, վորտեղ ապրել է մայրս, այլ, այլ, այնտեղ ծովափին, կառուցել տուր մի աշտարակ ու...

Հետո նա թողեց դահլիճը:

\* \* \*

\*

Տասնյակ գիշերներ ու ցերեկներ անցան և այն առավոտը, յերբ խանն իր պալատի պատշգամբից նայեց դեպի առաջ, ծովափին բարձրացած աշտարակը տեսավ:

Նա վաղեց Ռախիդայի մոտ ու.

— Աշտարակն արդեն պատրաստ է:

— Յես կգնամ այնտեղ, կաղթեմ ասածուն, իսկ քիչ հետո յեղ կգաս դու:

Ու Ռախիդան թողեց պալատը:

Բարձրացավ աշտարակի դադաթը:

Ո՞ր, ի՞նչքան բարձր է նա, կարծես թե ամպերի մեջ է կանդնած... ինչքան հեռու յե ծովը, ինչքան կապույտ է նա...



— Ե՛յ, մարդիկ և դարեր, չմեղադրեք ինձ, վոր այսպես վարվեցի, վոր...

Ահանջին հասալ վոտների ճայն:

Ոսանն արդեն դալիս ե:

Շքեղ, շատ շքեղ հարսանիք կլինի:

Չեռքերը դեպի առաջ պարզեց և...

Գիչ հետո ալիքները մի գեղեցիկ մարմին դըրկեցին:

. . . . .

Ու նրան կույսի աշտարակ անվանեցին:

. . . . .

Սա մի հին, բայց չհնացած լեզենդոս յե, վոր հին ամից հեռացած կասպիականի ալիքներն են պատմում ամեն դիշեր, յերբ փչում ե հողմը և ալիքներն են հուզվում, բարձրանում վեր ու շատրվանում:

ՇԻՆ ՔԱՂԱՔԸ, ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՅԵՎ ԿԵՆՑԱՂԸ

Քաղաքն անցյալում միայն բերդումն եր տեղավորված, վորի պարիսպներից միայն հարավայինն ու հյուսիսայինն են մնում, իսկ մյուսների հետքը միայն դետնի վրա յե յերևում: Կլիման չոր եր առաջ, ինչպես և հիմա, միայն կասպիականի ազդեցությունն եր քիչ հովացնում տաք, այրող յեղանակը:

Ասում են այստեղ մի քանի անգամ յերկրաշարժ ե յեղել, բայց վոչ մի վնաս չի տվել:

Այ ուրիշ եր 1852 թվի Շամախու յերկրաշարժը, վորը հողին հավասարեցրեց ամբողջ քաղաքը:

Յեվ ասում են, թե յերբ վորոչվեց, վոր գավառական կառավարությունը պիտի Բաղու փոխադրվի, չինովնիկների մի խումբ հակառակվեց դրան ասելով,

վոր Բաղուն հանցադործների, հարբեցողների և պոռնիկների վայր ե և վոչ թե...

Բայց գավառական կառավարությունը տեղափոխվեց Բաղու և քաղաքն սկսեց դուրս գալ իր դարավոր նիրհածությունից, սկսեց թևերը տարածել դեպի իր չորս կողմը...

Յերկար ժամանակ իր գոյությունը բերդում սրահելուց հետո նա իրեն միացրեց Բայիլն ու Չեմբերքենդ թուրքական փոքրիկ դյուղը: Հետագայում, նախ թային արդյունարրության դարդացման պատճառով, նրան միացան Սև ու Սպիտակ քաղաքները, իսկ Հոկտեմբերից հետո՝ Չըխն ու Ահմեդլի գործարանային վայրերը և Հայկավանը:

Ե և Բայց հին Բաղուն, հին արևելքը, հին կենցաղը դեռ չի մահացել. դեռ ապրում ե բերդում, հին, չմահացած արևելյան քաղաքում:

Փողոցները ծուռ ու մուռ են այստեղ, նեղ, խճճված իրար: Ասենք թե դու քայլում ես դեպի առաջ և քեղ թվում ե, վոր իսկապես դու քայլում ես դեպի առաջ, ու հեռանում ես քո անցած տեղից, բայց հանկարծ, դարմանքով նայում ես շուրջդ, յերբ նորից վոտներդ նույն ծանոթ դետնի վրայով են քայլում: Ավտոն կամ թե տրամվայն այստեղով անցնել չի կարող. բեռնավորված եչը, ինչպես դարեր շարունակ, դեռ մնում ե այս վայրերի միակ ամենահարմար տրանսպորտը:

Յերեկը, յերբ արևն իր վոսկեչող ճառագայթները թափում ե քաղաքի վրա, այդ նեղ, խուռ փողոցներում միայն նրա ստվերն ե յերևում, իսկ յերեկոյան մութ խավարը փոփում, դրկում ե ամեն ինչ և անտեսանելի յե դառնում քարը, հողը, տունը և մարդը:



Այստեղ հին արևելքը դեռ շարունակում է իր դո-  
յությունը:

Դեպի նեղ փողոցները բացվում են փայտյա դռ-  
ներ: Յերբ նրանցով անցնես բակը, այնտեղ զեղ կղի-  
մափորեն կեղտը, և դարչահատությունը: Անցիք սենյակ  
ու դրան կալեւանա տիրող խավարը:

Պատուհանները վաղ են, իսկ նրանց, համարյա թե  
բոլորի վրա յեղ ապակի չկա, այլ ձեթված թուղթ: Իրե-  
կունները վառում են նավթի ճրագները և այնտեղ վոչ  
վոչ չի մտածում ելեկտրական լույսի մասին, վոր կա-  
րող է վրդովել հին արևելքի անդորրը:

Պատմում են հեռեյարն ելեկտրական լույսի մա-  
սին:

Սանութպան Միրզա Շաֆիրը յերեկոյան տուն վե-  
րադառնալիս հանկարծ նեղ փողոցում ինչպիսի փոփո-  
խություն է նկատում. բարձր մի սյունի վրա վառվում  
էր ելեկտրական լամպը և լուսավորել էր շրջակայքը:

Միրզա Շաֆիրին այդ դուր չեկալ, նա զգաց, վոր  
խանդարվեց սիրելի մի անդորրություն, վոր պղծվեց  
պաշտելի մի սրբություն: Քիչ կանգնեց իր տան դռան  
առաջ, մտածեց, հետո հրեց դուռը և անցալ ներս:

Կես դիշերը վաղուց էր անցել, յերբ բացվեց մի  
դուռ և նեղ փողոցում յերևաց մարդկային մի սովեր:

Նա քիչ նայեց շուրջը, հետո կամաց-կամաց դեպի  
սյունը շարժվեց: Գլուխը վեր բարձրացրեց, քիչ նա-  
յեց ելեկտրական լամպին, հետո դրկեց սյունը և ակոց  
վեր բարձրանալ: Ահա և իր առաջ կախված է այդ ա-  
տելի ելեկտրական լամպը: Նա մի անդամ ևս նայեց  
շուրջը, հետո զողզողալով գրպանից հանեց յերկաթի  
մի կտոր, ուժեղ թարթեց աչքերը և հարվածեց ելեկ-  
տրական լամպին:

Խավարը նորից գրկեց շրջապատը և ամեն ինչ  
դարձալ անտեսանելի դարձալ: Վերականգնվեց հին,  
սիրելի արևելքի սիրելի անդորրությունը: Նա իջալ  
ներքև, ելի նայեց շուրջը և շարժվեց դեպի առաջ:

Անցալ սենյակ ու մտալ անկողին:

Այ, հիմա Միրզա Շաֆիրը կարող է հանգիստ  
քնել:

Վաղ առավոտյան հին արևելքի տղամարդ բնա-  
կիչները դնում են իրենց խանութները: Տեսնողներն ա-  
տում են, վոր նրանք այնտեղ անդործ նստում են, իսկ  
յերեկոյան տխուր վերադառնում տուն:

Հին արևելքի բնակիչները միշտ ել նստում եյին  
փողոցներում, թեյում, լվացվում և սափրվում: Ու,  
յերբ անցնում էր Միրզա Շաֆիրը, բոլորն ել իսկույն  
վոտքի ելին կանգնում և խոր գլուխ խոնարհելով ու-  
ղեկցում նրան:

Միրզա Շաֆիրը հին արևելքի ամենահեղինակավոր  
բնակիչն է, ամենահարուստ խանութպանը:

Յերբ նա հեռանում է, վոտքի կանգնածները դեռ  
յերկար ժամանակ շարունակում են նայել նրա վոտնե-  
րի թողած հետքերին, հետո նստում են ու խոսում նրա  
մասին: Պատմում են, վոր նա դարձալ ապրում է իր  
յերկու կանանց հետ, պատմում են, վոր նա դեռ չի մո-  
ռացել իր յերբորդ, ամենասիրելի կին Նունուֆարին,  
վոր...

Ասում են, վոր Միրզա Շաֆիրը սովորություն ու-  
ներ տուն վերադառնալիս կանգնել դռան շեմքում, քիչ  
նայել կանանց, հետո բաց անել դոտին ու շարտել դե-  
պի մեկը կամ մյուսը, ասել ուղեղով, վոր մեկի կամ  
մյուսի հետ կանցկացնե այդ գիշերը:

Բայց մի որ, յերբ վերադարձալ խանութից, մո-



տեցավ տանը, վտտով հրեց դուռը, կանգնեց շեմքում, նայեց իր յերկու կանանց, ձեռքը մտտեցրեց գոտուն, բայց խսկուէն հրաժարվեց այդ մտքից ու անցավ ներս:

Ասում են, վոր ամբողջ գիշերը նա մենակ է անցկացրել, անընեն ու մտալըսաղ:

Առավոտյան նա զնաց խանութ և իր մտտ կանչեց հարևան խանութպան հաջի Ալասթարին:

— Գիտես ի՞նչ, հաջի, աղջկանդ տեսա, Նունուֆարին և հալխանեցի:

— Քեզ դուրբան:

Հետո պատմում են, վոր յերկար ժամանակ, յերբ Միրզա Շաֆիրը վերադառնում էր տուն, կանգնում էր սենյակի շեմքում, հանում գոտին և դեպի յերիտասարդ և գեղեցիկ Նունուֆարը շարտում: Բայց մի որ յերկու կանայք չկարողացան տանել այդ դրութունը, վոխն ալիքվեց նրանց սրտում ու խեղդեցին յերիտասարդ, գեղեցիկ Նունուֆարին:

Շատ, ջատ լաց յեղավ Միրզա Շաֆիրը, ջլախնացավ, գոռաց, բայց էլ ինչ կարող էր անել...

Ասում էյին, վոր հետո նրա յերկու կանայք ամեն որ անհամբեր սպասում էյին նրա վերադարձին:

Իսկ Միրզա Շաֆիրը գալիս էր տուն, հրում դուռը և, առանց նրանց նայելու, առանձնանում ու թաղվում տիրության մեջ:

Բայց մի որ, նա էլի կանգնեց դռան շեմքում, յերկար դիտեց յերկու կանանց, մտածեց և կամաց-կամաց դողացող ձեռքը մտտեցրեց գոտուն, հանեց այն և դեպի մեկը շարտեց: Մյուս կնոջ աչքերում տեսավ վառվող կրակը:

Քիչ մնաց անշարժ, հետո բարձրացրեց արխայուղը և շարվարի վրայից կապած գոտին էլ հանեց: Քիչ շարժեց ձեռքում, հետո դեպի մյուս կինը շարտեց:

Թող, թող այդպես լինի, թող նա հենց այս գիշեր յերկուսի հետ էլ ապրի:

Հին քաղաքում բոլորն էլ ակնածությամբ են խոսում Միրզա Շաֆիրի մասին:

Հին քաղաքում դեռ հին արևելքը տիրապետող է:

#### ՁԱԴՐԱՅԻ ՔԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հին արևելքը համառեց, պայքարեց նորի դեմ, բայց վերջում նա կարծես զգաց իր պարտութունը:

Փողոցներում կամաց-կամաց յերևացին ելեկտրական ճրագներ և գիշերային անցորդն էլ չմոլորվեց, չկորցրեց իր ճանապարհը: Բնակիչներից մի քանիսը թողել էյին խանութները և նավթահանքերում բանվորութուն էյին անում, հիմա յեւ իրենց սենյակներում վառվեցին ելեկտրական լույսը և պատուհաններն էլ ապակեցին:

Հարևանները զայրույթով նայեցին նրանց, հալխոյեցին, բայց շուտով ընտելացան, հաշտվեցին այդ բանի հետ:

Միրզա Շաֆիրն էլ չկարողացավ կոտրել ելեկտրական ճրագները. միթե յերկուսն է կամ յերեքը:

Հին քաղաքի փողոցներում թերթ ընթերցող մարդիկ յերևացին և մի քանի յերեխաներ էլ սկսեցին զբոսը հաճախել:

Հին քաղաքում նոր մարդկանց թիվն սկսեց մեծանալ:

Մի շարաթ բոլորը զարմանքով խոսեցին այն մասին, թե ինչպես յեղավ, վոր Սուլեյմանի տղա Մահմուդը կոմսոմոլ դարձավ և հայրը, Սուլեյմանը, հանդուրժեց այդ:

Ամեն ինչ սկսեց փոխվել հին արևելքում. ամեն



ինչ շարժվեց տեղից, բայց չադրան եր, վորի մասին  
չեղավ վոչ մի խոսք, վորին վոչ վոք չհամարձակվեց  
ձեռք տալ:

Առավոտյան, յերբ տղամարդիկ դեպի խանութ ե-  
լին շարժվում, կանայք դուրս ելին դալիս բակերը,  
փողոցները և տնային գործերով զբաղվում:

Պատահում եր, վար նրանք լվանում ելին շորերը,  
հետո փողոցում յերկու, իրար դիմացի պատուհաննե-  
րից կամ դռներից թոկեր ելին կապում ու սկսում փոել  
շորերը:

Հանկարծ պատահում եր, վոր հեռվից մի վոտնա-  
ձայն եր հասնում նրանց ախանջին, իսկույն պինդ  
ծածկում ելին դեմքերը, թողնում լվացքը, վազում դե-  
պի բակ, ծածկում դռները և նրանց յետևից դեպի  
դուրս նայում, թե յերբ կանցնե անցորդը:

Քիչ հետո, յերբ փողոցում մահանում ելին բոլոր  
ձայները, նրանք մի փոքրիկ յերեխա ելին ուղարկում  
դուրս, ավելի լավ ստուգելու, թե գնա՞ց անցորդը,  
անհետացա՞վ նա: Հետո, յերբ համոզվում ելին դրա-  
նում, նորից դուրս ելին դալիս փողոց և սկսում փոել  
կիսատ թողած լվացքը:

Ո՞վ կարող եր չծածկել չադրան, հակառակվել հին  
արևելքում բարձրացող մեջիդին, այնտեղ ամեն ուր  
աղոթող մոլլային ու բացել դեմքը, շարտել չադ-  
րան...

Հին արևելքում ծնվող նոր մարդիկ անգամ դեմ  
ելին այդ բանին:

Բայց մի անգամ...

Գեղեցիկ եր Ռեհանը, տասնյոթամյա այն փոքրիկ  
թրքուհին:

Աչքերի արտևանունքները յերկարել ու նստել ե-  
լին այտերի վրա, իսկ նրանց սևուլթյանն անդամ մութ  
խավարը կնախանձեր: Ո՞վ, ո՞վ չեր կամենա տեսնել  
նրա յերեսը, նայել նրա այտերի վրա վառվող կար-  
մրին, յերկար մաղերին, բարակ իրանին...

Ո՞վ, ո՞վ չեր կամենա, վոր նա լիներ տան դար-  
դը:

Հին արևելքում հազիվ թե գտնվեր Ռեհանին,  
տասնյոթամյա այն փոքրիկ թրքուհու նման գեղեցիկ  
աղջիկ:

Յերբ նա անցնում եր փողոցով, բոլոր յերիտա-  
սարդներն ել իսկույն քարանում և ցանկալից կարո-  
տով նայում ելին նրան:

Ո՞վ, ո՞վ չեր նախանձում ինուրչուդին, Միրզա  
Շաֆիրի յեղբոր վորդուն, վորը փողի ուժով նշանվել  
եր այդ աղջկա, վորը պիտի տիրանար նրան և...

Հիմա յել ո՞վ կհամարձակվեր մոտենալ նրան:

Բարձրահասակ, հաղթանդամ ու գեղեցիկ տղա յե  
ինուրչուդը, մարմնի և փողի ուժ ունի, իսկ վոսկեպաա  
գոտուց կախված ե սուր խանչալը:

Ո՞վ, ո՞վ կհամարձակվի մտածել Ռեհանի,  
տասնյոթամյա այդ գեղեցիկ թրքուհու մասին:

Աշխարհում ինուրչուդ կա, իսկ ինուրչուդը նամուս  
ունի, ուժ ունի և խանչալ:

Ռեհանի հայրը, Ջումշուդը, մի քանի ամիս առաջ  
եր թողել խանութը և ուրիշների պես բանվորության  
գնացել:



Մի շաբաթ առաջ նրա տունն սկսեց հաճախել մի  
յերիտասարդ թրքուհի, վորին հանձնարարել էյին  
Ջումշուղի անդրադիտութունը վերացնելու աշխա-  
տանքը:

Նրա յերևալը հին քաղաքում անախորժ ազդեցու-  
թյուն թողեց հին արևելքցիների վրա, ինչպե՞ս, թուրք  
աղջիկը շարտե չադրան, բաց անե դեմքը և շրջե փո-  
ղոցները, խոսե տղամարդկանց հետ: Ծատ ջղայնացավ  
Սուրչուղը, վորը նկատեց և այն, թե ինչպես մի քանի  
անգամ նա ու Ռեհանն անցան նեղ փողոցներով և դե-  
պի ինչվոր տեղ դնացին:

Սուրչուղը հետևեց նրանց և իմացավ, վոր նրանք  
թուրք կանանց ահումբ են հաճախում:

Մի որ, խուրչուղը կանգնեց Ռեհանի առաջ, ու.

— Դու յել Սոնայի հետ չպիտի խոսես, ել ահումբ  
չպիտի դնաս:

Ռեհանը չադրայի տակով միայն նայեց նրան ու  
լուռ դեպի առաջ քայլեց:

Սուրչուղը յերկար ժամանակ հարցաքոյ ուղեկցեց  
նրան, հետո մի քանի անգամ վոտները դետնին դար-  
կեց ու անհետացավ նեղ փողոցներում:

Մի ամիս անց, հին արևելքի բնակիչներն ապչեցին,  
յերբ իմացան, վոր Ռեհանը, տասնյոթամյա այդ դե-  
ղեցիկ թրքուհին, Սուրչուղի նշանածը, շարտել է չադ-  
րան, բացել է դեմքը:

Մի շաբաթ վոչ վոք չտեսավ Սուրչուղին:

Յեվ մի ուշ յերեկո, Ջումշուղի տան առաջ մեկը  
կանգնեց մի աղջկա դիմաց ու.

— Ինչո՞ւ վերցրիր չադրադ, ո՞վ հրամայեց քեզ,  
ինչո՞ւ վոտնակոխ արիր պատիվս, նամուս:

— Մենք իրար չենք հասկանա, Սուրչուղ, — ասաց

աղջիկը, — ավելի լավ կանես, վոր ինձ հանդես թող-  
նես:

Նամուը հին արևելքում պաշտվում է, ինչպես և  
աստվածը, մեջիղը. Հհամարձակվել նրան պախարա-  
կել, վոտնակոխ անել:

— Վաղվանից կծածկես չադրադ:

Ռեհանը շարժվեց առաջ:

— Ռեհան:

Աղջիկը յետ ջնայեց:

Դողացող ձեռքերը մոտեցան սադաֆած և սուր  
խանչալին ու մեկն աղիողորմ ճիչ արձակեց:

Փողոցը լցվեց մարդկանցով:

Ի՞նչ պատահեց:

Ջումշուղն իր տան առաջ փոված տեսավ իր միակ  
աղջկա դիակը:

— Յես, յես սպանեցի նրան, վորովհետև նա թքեց  
իմ նամուսի վրա, վորովհետև նա շարտեց չադրան:

Յեվ Սուրչուղը վազեց, անհայտացավ դիշերվա  
խավարի մեջ:

Այդ դիշերը շատերը գովեցին նրա քայլը, իսկ վո-  
մանը տխրեցին...

Հետո ել ո՞վ կհամարձակվեր չադրայից ազատ-  
վելու մասին...

Այդ դեպքից մի քանի ամիս անց, մեկը կամեցավ  
բացել դեմքը, բայց հիշեց Ջումշուղի դոսան առաջ  
արյունոտված հողը և իսկույն հրաժարվեց իր մտա-  
դրությունից:

Չադրայի թողալորութունն սեժեղ եր:

Ա Լ Ի Շ Ա Ս Ա Ն Ը

Հին քաղաքի քնակիչ Ալի Հասանը յերեկոյան դեմ  
փակեց խանութը, կանգնեց նրա առաջ, քիչ նայեց



դիմացի կոտորածներովն, դեպի վորը մտտիկ անցյալ  
լում ավելի վատ եր տրամադրված, հետո հայացքը  
նորից իր խանութին մեխեց, խորը ախ քաշեց և կա-  
մաց-կամաց շարժվեց առաջ:

Վերջին անգամ նա այսոր յեկավ խանութ, վերջին  
անգամ նա այսոր դբադվեց առևտրով... Ինձացի կոտ-  
որածներովը հաղթեց, նորը հաղթեց իրեն... Ել չի լաց-  
վի իր խանութի դուռը... Վերջին անգամն է, վոր նա  
բայլում է այս փողոցով...

Այի Հասանը հասավ տուն, անցավ ներս, չպրտեց  
ձեռքի բանալին ու ընկավ թախտին:

Գիշերն Այի Հասանը, հին արևելքի այդ հարա-  
զատ փորդին, համարյա անքուն անցկացրեց:

Դժվար է հրաժարվել հնից, հին, սիրելի սովոր-  
ույթներին, վոր քեզ համար արյուն են, միս, ու-  
զեղ, դժվար է հրաժարվել հին արևելքից, իսկ իր վո-  
րոշումն այդ է պահանջում, համարյա այդ է պահան-  
ջում:

Ճհ, թող այդպես լինի...

Ձե, թող այդպես չլինի...

\*  
\*

Առավոտյան մեկը նստեց № 5, սալա № 4 ելեկ-  
տրոբարը և, կամրջից անցնելուն պես, իջավ ու մո-  
տեցավ յերկաթե մի դռան: Ցույց տվեց ձեռքի թուղ-  
թը և անցավ ներս: Շարժվեց դեպի գրասենյակ: Ինչ  
հետո դուրս յեկավ և կանգնեց բակում:

Նա հիմա յել խանութպան Այի Հասանը չէ, այլ  
յերկաթուղայինների դեպոյի բանվոր:

Հետո նա դեպի դադդյա՛ գնաց:

Որերն անցան ու նա, ընկերների ողնությամբ,  
ընտելացավ իր աշխատանքին:

\*  
\*

Հնչեց ճաշի գուղտիլը:

Բանվորները վազվեցին և գեպի ճաշարան շարժ-  
վեցին:

Ուրախ յերգերի, խոսակցությունների աղմուկը  
լցրեց մեծ դահլիճը:

Հետո լռեցին ձայները և բոլորն էլ սկսեցին ու-  
շառույթյամբ լսել բժշկի գասախոսությունը՝ առող-  
ջապահության մասին:

Հանկարծ բանվորներից մեկը դարձավ դեպի իր  
հարևանն ու.

— Լսիր, Իվան, ելի՛ր չեկավ Այի Հասանը:

— Ձե, Հայկ:

Հայկը վեր կացավ տեղից և դեպի իրենց ցեխը  
շարժվեց:

Յերը դռնից ներս անցավ, դարձյալ նկատեց, վոր  
մեկը նստել է պատի տակ, քուրայից քիչ հետու, և  
լուռ, ինչվոր ուտում է:

— Այի Հասան, եր ի՞նչ ես անում:

Այի Հասանը միայն նայեց նրան:

— Վեր, վեր կաց, գնանք մեզ մոտ:

— Ձե, չեմ ուզում, ինձ մենակ թողեք:

— Ամոթ է, Այի Հասան:

Յեղ Հայկը համարյա թե գրկեց նրան ու դուրս  
տարավ ցեխից:

Յերը նա մտավ դահլիճ, յերկար ժամանակ շշկը-  
ված նայեց իր շուրջը չտեսնված միջավայր, չտեսնված



մարդիկ. հայ, ուսու, թուրք, վորոնք խառնվել են իրար ու...:

— Այի Հասան, նստիր մեզ մոտ, ետր արտա-  
հարգ լավ ճաշ է,—ասաց Իվանը:

Չե, եղ մեկը կներեք, Այի Հասանը փակեց իր  
խանութը, դատով բանվոր, նույնիսկ համաձայնվեց  
դալ դահլիճ, իսկ այդ մեկը յերբեք նա չի անի... այդ  
մեկը... հաց ուտե՞լ հայի, կամ թե ուտի հեռ...:

Այդ մեկը՝ կներեք:

— Այի, ինձ մոտ արի,—լավեց մի ուրիշ ձայն:

Այի Հասանը նայեց դեպի նա:

Ա, նա հայացած, ուսացած, ղուրանի պաշտելի  
սրբությունը փոտնակոխ արած մի թուրք է:

— Չե, չեմ ուզում, կուշտ եմ:

Նա կամեցավ թողնել դահլիճը, բայց ընկերները  
չթողին:

Մի յերիտասարդ սողչիկ, վոր յերկար դիտում եր  
նրան, մոտեցավ և.

— Ինչո՞ւ չես ճաշում:

— Չեմ ուզում:

— Ինչո՞ւ:

— Նու... Ախր... Լավ, թողեք դեմա ցեխ, յես  
ենտեղ տնից բերած ճաշ ունեմ...:

— Ախր ինչո՞ւ մեր ճաշից չես ուզում ուտել:

— Ինձ ազատ թողեք:

— Միթե՞ աշտեղ...:

— Չե, չե, բայց...:

— Յեթե չե, գոնե մի թիքա վերցրու, վոր—

Այի Հասանը նայեց խոսող թուրքին:

Դողդողացող ձեռքը մոտեցրեց մի ափսոսի: Նա-  
յեց տիրոջ դեմքին, հայ է:

Չե, հարկավոր չի:

Հեռացրեց ձեռքը:

Այ, այն թուրքի բաժնից կվերցնի:

Բայց միթե՞ մեկ հաշիվ չե...:

\* \*

\*

Յերեկոյան, յերբ նա տուն դնաց, յերկար ժամա-  
նակ ձեռքը զմոտեցրեց սեղանին դրած հացին:

— Ինչո՞ւ չես ուտում,—հարցրեց կինը:

— Յես հայերի հեռ հաց կերա,—կամաց շնչաց

նա:

Կինը լուռ քարացավ:

Յերկար ժամանակ վոչ վոք չխոսեց:

— Բայց, ախր, չե վո՞ր նրանք ել մեզ պես մար-  
դիկ են, չե վո՞ր...:

Այի Հասանը ձեռքը դեպի սեղանին դրած հացը  
յերկարեց:

\* \*

\*

Քանզվում եյին հին, սիրելի սովորությունները,  
ղուրանի պաշտելի սրբությունները, հին արեւելքը:

Ջ Ա Ն Բ Ա Ն

Նա դարեր շարունակ ճնշվել է և վոչ վոք չի մտա-  
ծել նրա մասին:

Փակված է յեղել տան մեջ ու չի տեսել արեւի  
լույսը:

Յեղել է ճորտ, սարուկ և միայն հրամաններ է  
կատարել:



Ուրախությունը խորթ է յեղել նրան, ծիծաղե՞  
ոտար նրա դեմքին:

Նա իր սիրտը միշտ թաղել է սենյակի խալաթ  
տխրության մեջ:

Սև ջողը ծածկել է նրա դեմքը, սիրտը, կամքը,  
զգացմունքները և նա շարժվել է վորպես մեքենա,  
բազրել՝ մահացած:

Նա իր բոլոր վշտերը թաղել է աչքերից հոսող ար-  
ցունքների մեջ:

Դարերը մուսյուլթյան խոր կնիքն են դրել նրա  
վրա...

\* \*  
\*

Կարծես թե ումբ պայթեց հին արևելքում, կար-  
ծես թե վարարեցին դետերը և ամեն ինչ քչեցին, տա-  
րան իրենց հետ.— թե՛ աղաթ, թե՛ հավատ, թե՛ յեր-  
կյուղ, թե՛...

Միթե՞ Չահրան չգիտեր, վոր յերեսը բաց անելու  
համար, չաղրան չպրտելու համար՝ սպանվեց Ռեհա-  
նը, միթե՞ նա չէր տեսել Չումչուղի տան առաջ թափ-  
ված կարմիր արյունը...

Ինչպե՞ս յեղավ, վոր Սուլեյմանը, կամ նրա տղա  
Մահմուդը հանդուրժեցին, վոր Չահրան չպրտե չաղ-  
րան, բացե դեմքը...

Լավ, ասենք Մահմուդը կոմսոմոլ է, չի հակա-  
ռակվի այդ քայլին, բայց միթե՞ հայրն էլ է կոմսո-  
մոլ, կոմունիստ, նոր մարդ...

Մի քանի հոգի այդ մասին խոսեցին նրա հետ:  
— Յես էլ եմ համաձայնվել Մահմուդիս հետ և  
թողել եմ, վոր աղջիկս բացե դեմքը,— սլատասխանեց  
նրանց Սուլեյմանը:

Յեկ Չահրան բաց դեմքով, համարձակորեն քայ-  
լում էր նեղ փողոցներով, նայում էր տղամարդկանց  
յերեսին և շատերի հետ խոսում էլ էր:

Այ, հիմա նա կարողանում է տեսնել արեղակի  
ժաղումը, յերկնքի կապույտը...

Հիմա կյանքը շատ քաղցր է նրա համար:

Յերբ նա անցնում էր փողոցով, շատերը հայն-  
յում էյին նրան, բայց շուտով նրանք կարծես դբան էլ  
ընտելացան:

Շուտով Չահրան նույնիսկ կարողացավ մի քանի  
յերեսներ էլ բացել:

Շուտով նա նույնիսկ իր ձեռքով դիմում գրեց  
կոմսոմոլի շարքերն անցնելու համար:

Հաղթանակը լավ է, շատ լավ:

\* \*  
\*

Թուրք կանանց ահումբում բոլորն էլ նսնաչեցին  
Չահրային, սիրեցին նրան:

Այ, նա ամենայն ուրախությամբ կատարում է իր  
վրա դրված պարտականությունները, և որեցոր ավե-  
լացնում է հաճախորդների թիվը:

Հիմա նեղ փողոցներով անցնելիս իրեն ժպտացող  
դեմքեր է տեսնում:

Հին արևելքում շատերն սկսեցին նրա որինակին  
հետևել:

Նույնիսկ նրանք ընտեքացան և նրան, յերբ նկա-  
տեցին, վոր ամեն յերեկո մի հայ տղա ուղեկցում է  
նրան մինչև ոտուն:

Հին արևելքը շարժվում էր տեղից, հին արևելքը  
չանդվում էր:



Այդ որը, յերբ նա ահուածրից դուրս յեկալ, տե-  
սալ, վոր դրսում դարձյալ սպասում է Արամը, իրեն  
ամեն որ ուղեկցող հայ տղան:

Քայլեցին:

Մեզմ քամի կար և կամաց պարում ելին ողում  
նրա սև մազերը:

Կանգնեցին ելեկտրաքարչի կայանում:

— Վտարով դնանք, Արամ,—ասաց Զահրան,—  
յեղանակը լալ է:

— Կարելի չէ:

Քայլեցին:

Լայն փողոցներից անցան նեղ փողոցները:

Մհա յերևում է այն տունը, վորտեղ ապրում է  
Զահրան, ահա...

— Գիտե՞ս ինչ կա, Զահրա:

— Վոչ:

— Ախր յես քեզ սիրում եմ:

— Դո՞ւ:

— Այո:

— Լալ ես անում:

— Իսկ դո՞ւ:

— Յես էլ:

Արամը բռնեց նրա ձեռքից:

Մհա և նրանց դուռը:

— Լալ, հիմա դու դնա ձեր տունը, իսկ հետո  
յերբ յես սենյակ ստանամ, կամուսնանանք ու...

Բաժանակցին:

Այո, հաղթանակը շատ լալ է:

Պարսիկներն այս քաղաքն անվանում էին «Բաղ-  
կուհ» կամ «Բաղ Կուրե», այսինքն «լեռնային քամի»,  
«հողմային հարված» ասել է, թե այս քաղաքում լեռ-  
նային քամի, հողմային հարված կա, ասել է, թե հող-  
մերը տիրապետող են այս քաղաքում:

Այդպես էլ կա. քամին, նորդը, դարերի պատմու-  
թյուն ունի, նույնիսկ ասում են, վոր յերբ չկար այս  
քաղաքը, նա դարձյալ պարում էր Կասպիականի ամա-  
յի ափում:

Քաղաքը կառուցվեց, ամայությունը փոխվեց, իսկ  
քամին մնաց:

Յերբ նա փչում է, իր հետ բերում է դորը, կեղ-  
տոտ փոշի, վորը վաղում է փողոցներով, ծեծում է  
դռները, պատուհանները, անցնում է ներս, նստում է  
սեղաններին, մահճակալներին, պատից կախված նկար-  
ներին ու ամեն ինչ գորշանում, փոշոտվում է:

Նա ծեծում է փողոցով անցնող մարդկանց, նըս-  
տում է նրանց մազերին, շորերին, մտնում է աչքերի  
մեջ և այդ պատճառով անցորդները փոշուց սրաշո-  
պանվելու համար՝ ակնոցներ են կրում ու նմանվում  
են արտասահմանից յեկած տուրիստի:

Յերբ ղչում է նորդը, գորշանում է հենց ամբողջ  
քաղաքը. նույնիսկ գորշանում, փոշոտվում է հենց  
մարդկանց տրամադրությունը:

Այսպեսի որերին, յերբ բանվոր Սարգիսը գործա-  
րանից դուրս էր գալիս, նույնիսկ չէր էլ կամենում  
գեպի առն քայլել:

Առավ ղոտքով էր դնում Հալիպան և աստվա-  
ներն էլ այնտեղից փոտքով գալիս գործի. ելեկտրա-



քարչը մոտեցրեց տունն ու գործարանը, անախորժ հե-  
ռափորությունը մեռաւ, բայց...

Իջնում եր ելեկտրոքարչից և դեպի առաջ, դեպի  
տուն քայլում:

Այ, նեղ փողոցներ և հողի տներ:

Կեպին քաշում եր աչքերին ու առաջ շարժվում:

Դիմացից դեմքին դարկում եր քամին, փոշին, իսկ  
նա քայլում եր... ուրիշ ի՞նչ կարող եր անել...

Ո՞՞, ի՞նչ վատ յեղաւ, աչքը փոշի ընկաւ...

Նա կանգ եր առնում, շրջում եր գլուխը, հետո  
գրպանից հանում եր թաշկինակը և սրբում աչքերից  
հոտոզ փոշոտ ջուրը:

Նորից քայլում եր:

Իր առաջ փութած եր գորշ Հայկափանը:

Նա շատ պարզ հիշում եր 18, 19, 20 թվականնե-  
րը, հիշում եր սովը, փողոցներում թափված սովա-  
մահ մարդկային դանդաղները, մարդկային մերկա-  
թյունը... Հիմա, դե հիմա ուրիշ ե, հիմա... բայց,  
այդ գորշութունը, այդ հողի տների ներկայութունը  
լավ չե, այնքան ել դուրեկան՝ չե...

Գետնահարկ և հողի տներն իրեն միշտ անցյալի  
ներկայութունն են հիշեցնում. թվում ե, թե չի յեղել  
Հոկտեմբերը, թե... Կանգնում եր իր տան բռնաջ և  
ներս մտնում:

Փոքրիկ սենյակ եր և փոքրիկ պատահանից հա-  
զիվ եր ներս թափանցում գորշացած, փոշոտ լույսը:

Ներսում՝ ամեն ինչ գորշացել, մռայլվել եր, սե-  
զանը, դատը, պատկերները, հացը, ջուրը:

Այդպիսի տներում միշտ գորշացած, փոշոտ սրա-  
մազրութուն եր լինում, յերբ բարձրանում եր նորգը,  
յերբ գոռում եյին հողմերը:

Գործարանից վերադարձաւ և շատ տխուր եր.  
Պատեց, ճաշեց, բայց տխրությունը դեմքից չհեռա-  
ցաւ:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց կինը:

Մոռալինը լուռ նայեց նրան:

— Ի՞նչ ե պատահել, — կրկնեց իր հարցը կինը:

— Պիտի թողնենք այս տունը, նորն են առլիս:

— Ի՞նչպե՞ս:

— Այո:

Ուրիշ եր այն, յերբ ինքը փակեց խանութը և բան-  
վոր դարձաւ, ուրիշ եր այն, յերբ իր տանը վառեց  
ելեկտրական լամպը, ուրիշ ե հիմա, յերբ նրան ասում  
են փոխիք սենյակդ և...:

Այդ նշանակում ե, վոր նա ել չպիտի քայլե նեղ  
փողոցներով, այդ նշանակում ե, վոր ել չպիտի տեսե՛  
ցածր, հողի տները, թղթե պատահանները, այդ նշա-  
նակում ե, վոր ել չպիտի լսե մոլլի ձայնը, ել չպիտի  
հարեանություն անի իր խանութպան ընկերների հետ:

Իժվար ե, գիտե՛ք, շատ դժվար ե հին արեւելյու-  
համար, միանգամայն հրաժարվել հին քաղաքից, հին  
արեւելքից:

Բայց նոր տուն են տվել և նա պիտի տեղափոխվի:

— Վո՞րտեղ ե այդ նոր տունը, — հարցրեց կինը:

— Շահումյանավանում:

— Վորտե՞ղ:

— Հին Արմենիքներում:

— Բայց չե վո՞ր ենտեղ մի կարգին տուն չկե,  
չե՞ վոր բոլորն ել հողե, պատահարի են:

— Ե, դա առաջ եր, իսկ հիմա...



Դուրս յեկավ սենյակից և վարձեց կառք, առ-  
բանքները բարձեցին ու կառքը դեպի առաջ շարժվեց՝  
Հանկարծ կանգ առավ ու նայեց կարմրած հողին՝  
Ս, միթե՞ նա յեւ չպիտի տեսնի այդ հողը... Իր  
սիրելի աղջկա, իր սիրելի Ռեհանի արյունով կարմրած  
հողը...

Կառքը նեղ փողոցներով շարժվեց առաջ:

Պատուհաններից, կիսաբաց դռների արանքից  
նրանց նայեցին բազմաթիվ աչքեր:

Եւ, բարի ճանապարհ ձեռքի:

Մնաս բարով հին քաղաք:

Հին քաղաքը մնաց յետևում:

Սհա և յերևաց Եանում յանավանք:

Սհա մի մեծ այգի, վորտեղ բարձրանում է Եա-  
հում յանի կիսանդրին և հպարտ նայում դեպի քաղա-  
քը, դեպի կապիականի կապույտը:

Ինչպե՞ս, ի՞նչպես է փոխվել հին Արմենիքները:

Լաջն տարածության վրա բարձրացել են հարյու-  
րավոր տներ, առաջացել են ուղիղ փողոցներ, վորտեղ  
վոչ իրավար կա, վոչ ել փայտե դուռ, վոչ ել թղթած  
պատուհան:

Հին Արմենիքներն ամբողջովին մահացել է. մա-  
հացել է և փոշին, դորշությունը:

Կառքը կանգ առավ յերկհարկանի մի սպան առաջ՝  
Ձուձ շուգը բարձրացրավ աստիճաններով և կանգ-  
նեց յրեն հատկացրված սենյակների դռան առաջ:

Կողքի դռնից մեկը հանեց դուռը:

— Ո, նոր հարևան, շատ ուրախ եմ, ծանոթա-  
նանք, Սարգիս:

Ձուձ շուգը սեղմեց նրա պարզած ձեռքը:

Սպրանքները տեղափոխեցին:

Կառքը հեռացավ:

Կինը կանգնեց դռան շեմքում և դիտեց շուրջը:  
Ե, միթե՞ կարելի չէ համեմատել այս իրենց հին  
սենյակի հետ:

Նա անցավ պատշգամբ:

Ս, ի՞նչ տեսարան, ինչքան մաքուր ու թարմ է  
ողը, ինչքան կապույտ է ծովը:

Յերբ նա շրջեց հայացքը, հարևան տան պատշա-  
ղամբում նկատեց մե յերիտասարդ ուղջկա:

Մնցավ ներս և դարձավ ամուսնուն:

— Ձահրան ե՞լ է այտեղ ապրում:

— Հա, նա պսակվեց Արամի հետ և յեկան այս-  
տեղ:

\*\*\*

Մի քանի օր շարունակ Ձուձ շուգն աշխատանքից  
հեռո դարձյալ դեպի հին քաղաքն էր քայլում, նայում  
էր նեղ փողոցներին, ցածրիկ տներին, թղթած պա-  
տուհաններին ու արյունոտված հողին:

Նա տեսավ, հասկացավ, վոր չուտով նոր քաղաքը  
դեպի այդ կողմը կշարժվի, վոր կքանդեն հին քաղաքի  
դարավոր պատերը, պարիսպները, կենցաղը և փոշին  
կերևա տեղը:

Հեռո, նոր, բարձր տներ կկառուցվեն այդտեղ և  
նոր, լայն փողոցներ կստեղծվեն:

Թող, թող այդպես լինի, թող մահանա, փոշիա-  
նա հին քաղաքը, հին արևելքը, հին կենցաղը, թող  
անկամ չերևա այն հողը, վորի վրա թափվեց իր աղ-  
ջկա, իր սիրելի Ռեհանի արյունը, միայն այդ այգապե-  
լի՞ն, միայն այդտեղ էլ բարձրանա նոր քաղաքը, նոր  
արևելքը, նոր կենցաղը:



Այս քաղաքում 600 հազարից ավելի մարդիկ են ապրում, ասել է, թե Միուլթյան յերրորդ քաղաքն է: Այս քաղաքը բանվորական, իսկական ինդուստրիալ բանվորական քաղաք է, վորտեղ ենտուղխաղմբ հորդանում, ալիքանում է ավելի ուժեղ, քան ինքը կասալիական ծովը:

Այ, մի տարի սուալ այս քաղաքի հազարավոր բանվորները յերկու և կես տարում կատարեցին նավթի հնդամյա, գիզանտային սլանը և կոլխոզային աբաիի տրակտորներին, զործարաններին, յերկրին ու ծովերին նավթ սև, սիրելի նավթ տվին:

Հիմա, միթե՞ կարելի յե հանդուրժել Հին քաղաքը, միթե՞ այդ բանվորությանը, աշխատաւոր մասաներին չալիտի բարձրացնել վեր, դեպի կուլտուրական բարձունքները, դեպի կուլտուրական մաքրությունը, առողջապահությունը:

Յեվ բանվորական արվարձաններում իրար յետեից կատուցվեցին կուլտուրայի պարտներ, վորտեղ նրանք հրահարում են կինո, թատրոն, ժողովներ ունենալու համար, վորտեղ նրանք ունեն դանաղան տիպի սեկցիաներ, մուզեյներ:

Բանվորական արվարձաններում կանաչադարձիցին լայն տարածություններ և բարձրացան կուլտուրայի և հանդստյան պարկերը:

Դա դեռ բավական չէ: Յերկաթե ուղիները հոսել եյին փողոցներով, ցանցել ամբողջ քաղաքը, միացրել նրա հետու արվարձանները և դարձրել մի անխախտելի, անբաժանելի ամբողջություն:

Բանվորն աշխատանքից հետո նստում է երեկարա-

բարչը, անցնում է տառ բողև և նա արդեն տանն է:

Իսկ տո՞ւնը: Մաքուր սենյակներ՝ —բարձր առաստաղով, մեծ պատուհաններով, կողքին լողարան, խոհանոց և մյուս հարմարությունները:

Այո, կառուցումն այնքան ուժեղ եր, վոր նախկին արվարձանները փոխեցին իրենց տեսքը, ուժեղացան և թարմացան:

Յեվ ամեն յերեկո հազարավոր պատշգամբներից, պատուհաններից քեզ ժպտում են հազարավոր թարմ, առույզ դեմքեր, աչքեր:

Բուր պատշգամբներում բամեն որ ընթերցվում են որվա թերթերը, իսկ յերեկոյան ելեկտրական ճրագները լուսավորում են լայն, կանաչադարձ շրջակայքը, սենյակների ներսը և մարդկային մտքերը:

Այդ լայն սենյակներում, մաքուր ողում, արևի այրող ճառագայթների տակ մեծանում եյին ապագա, անդասակարգ հասարակության քաղաքացիները:

Դա յեւ բավական չէ: Մարդը կուվում է մրրիկների, վորոտների դեմ, անձրևի ու կարկտի դեմ, միթե՞ չի կարող կուվել փոշու դեմ, վոր իր աչքերը, իր թոքերը չվնասե, վոր մաքուր մնա փողոցը, սուներ:

Բայց միթե՞ այս քաղաքում լավ փողոց կա: Ճիշտ է, ուղիղ և լայն փողոցներ այս քաղաքում չստ կան, բայց...

Յեվ արագ կերպով քանդվեցին փողոցները, մայթերը:

Քարերն ու փոշիները խառնվեցին իրար և քաղաքում կուտակվեց կեղտը:



Գանդաված փողոցներն ալիլի հարթացրին, լցրեցին  
խորթուբորդերը և լայնացրին մայթերը:

Հետո յեկավ ասֆալտը, ծանր, սև ու ամուր աս-  
ֆալտը:

Նա հոսեց փողոցից-փողոց, մայթից-մայթ և հո-  
ղը, փոշին ծածկեց:

Գեղեցիկ սևությունը փռվեց քաղաքում:

Ապակենման հարթ սևություն:

Բայում ևս փողոցով և քեղ թվում է, թե դու ջրի  
վրայով ես անցնում:

Ավտոն ստորայով անցնում է ու թվում է, թե հով  
քամի յե միայն փչում:

Բամի լինելիս դու ել ակնոցների կարիք չես  
զդում:

Ձկա փոշի, չկա փոշու մայրը՝ հողե տունը, քանդ-  
ված փողոցը:

Յերեկոյան դու ուրախությամբ ես նայում փողո-  
ցի յերկարությանն, այն սև դոտուն, վոր շրիկ է ամ-  
բողջ քաղաքը:

Յերեկոյան նրա վրա յերևում է վազող ավտոյի,  
մայթերին բուսած ծառերի ու քայլող մարդկանց  
սովերը: Յերեկոյան նրա վրա յերևում է վառվող  
էլեկտրական լույսը:


Գիշերը փողոցները հանդիսա քնում են և քամին է  
միայն պարում նրանց վրա: Նա մի տեղ կանդ է առ-  
նում, ըստում է իր ուժերը և կամենում է բարձրացնել  
փոշու սյունը, բայց վո՞րտեղից կարող է դանել փո-  
շին. նա մահացել, թաղվել է ասֆալտի տակ:

Ու, հիմա, գիտե՞ք, հալատում էք, այս քաղա-  
քում, վորը Շեմախիի իշխանավորները հանցադործնե-

թի ու պոռնիկների բնակավայր էյին հայտարարում,  
բուսնում, ծաղկում է սեփական վարդը, ծառը:

Հիմա բարձրանում են բաղմահարկ ու ամուր  
տներ, կանաչը ծածկում է քաղաքը, չըջապատում ծո-  
վանում են վիշկաները և անդամ մարդկանց ջղերն էլ  
են ասֆալտվում, ամբանում, բեռնանում, մարդ-  
կանց, վորոնք հերոսական հեղամայակը յերկու և կես  
տարում կատարեցին, մարդկանց, վորոնք ովկայանա-  
ցող ենտուղխարմով կատարեցում են սոցիալիզմը:

1932 թ., Բացնե





Յ Ա Ն Կ

	62
1. Վիշկանները բարձրանում են . . . . .	8
2. Լուկ-Բոտան . . . . .	14
3. Ալի Մարդան . . . . .	24
4. Ասֆալտավում և քաղաքը . . . . .	44

---

« Ազգային գրադարան



NL0326740



ԳԻՆԸ՝ 50.407.

24137

Г. Бес  
ВЫШНИ ПОДНИМАЮТСЯ  
ГИЗ ССРЭ Эривань